

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



9.



ՊԻՈՆԵՐԱԿԱՆ

ՇԱՐԺԱԿԱՆ

ԽԱՂԵՐ



371.7

Z-34

ՊԵՏԱՐԱՆ

1930 թ.

ՅԵՐԵՎԱՆ

0120-10

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

371-76

2-34

W

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԻՈՆԵՐ ԿԵՆՏ. ԲՅՈՒՐՈՑԻ ՅԵՎ ՖԻԶԿՈՒԼՏ.
ԵՐ. ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻ

Կազմեց Հ. Ս. Զ. Ի. Կ.



15196-57

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀԱՋԻԿԻ ՍՈՒՅՆ ԳՐՔՈՒՅԿԻ ԱՌԹԻՎ

Ընկ. Հաջիկի խաղերի այս գրքույկը կազմում է նրա «Սենյակային խաղեր»-ի շարունակությունը:

Հենց այն փաստը, վոր «Սենյակային խաղեր» գրքույկը չափազանց արագ սպառվեց, խոսում է այն մասին, վոր պիոներական կազմակերպությունը մեծ չափով կարիք է զգում թարմ և կենսունակ խաղերի. այս գրքույկը զալիս է լրացնելու այդ կարիքի մի մասը:

Պիոներական շարժական խաղերը տարբերվում են սենյակային խաղերից նրանով, վոր այս խաղերի վայրը գլխավորապես հանդիսանում է դուրսը, բնությունը և ավելի շատ կապված է շարժողությունների, գործողությունների հետ, վորը խաղը դարձնում է ավելի հետաքրքիր, ավելի մոտ պատանիների Փիզիկական առանձնահատկություններին: Այս հանգամանքը լիակատար իրավունք է տալիս «Պիոներական

Հրատ. № 1103

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառես. № 2814(բ)

Տիրաժ 3000

Պատ. 1106

շարժական խաղեր» այս գրքուկը հանձնարարե-
լու պիտի անշխատողներին պիտի անհաշտան
լեկտիւններ առարկա աշխատանքներում ոգտա-
գործելու և մասսայականացնելու:

ՊՈՆՆԵՐ-ԿԵՆՏՐՅՈՒՐՈ

ԱՆՅՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻԲ

1. Խաղերի նշանակութիւնը

Արեգակ, ոգ և ջուր—ահա առողջացման այն
հիմնական ֆակտորները, վորոնց ոգտագործման
վրա պետք է կառուցվի պատանիների ֆիզիկա-
կան դաստիարակութիւնը: Այս տեսակետից
շարժական խաղերը պատանիների և փոքրահա-
սակների համար հանդիսանում են ամենալավա-
գոյն միջոցներից մեկը և հնարավորութիւն են
ստեղծում լրիվ կերպով ոգտագործելու արեգակը,
ոգը և ջուրը:

Շարժական խաղերի միջոցով պատանեկու-
թիւնը վոչ միայն զարգանում է ֆիզիկապէս,
այլև դաստիարակվում է:

Խաղերի ժամանակ մասնակցողները քայլում
են, վազում, ցատկում, կանգնում են մեկ վոտ-
քի վրա (հավասարակշռութիւն), նետում են,
բռնում, կռանում, թեքվում, հարվածներից
խուսափում, ընդդիմադրում, ձեռքերի զանազան
շարժումներ կատարում և այլն, մի խոսքով՝ ա-
ռանց վորևէ նկատելի ուժ գործ դնելու՝ կատա-

րում են բոլոր գոյութիւնն ունեցող շարժում-
ները և վարժութիւնները:

Բացի այս համարչա բոլոր խաղերում պետք
է աշխատել նաև գլխով: Խաղի ժամանակ
յուրաքանչյուր խաղացող մտածում է, թե ուր
գեպքում ինչպես վազել, ինչպես ցատկել, ինչ-
պես վարվել, վոր ավելի նպատակահարմար լի-
նի իրեն կամ իր խմբի համար:

Խաղերը զարգացնում են ընկերասիրու-
թիւնը, կարգապահութիւնը, համարձակութիւ-
նը, մասնակցողներին ավելի ուշադիր են դարձը-
նում, ստիպում են լինել ավելի ճարպիկ, լա-
րում են լսողութիւնը, տեսողութիւնը, մի խոս-
քով՝ ամբողջ մարմինը վտարներից մինչև գլուխ
աշխատանքի յեն լծում:

Յեթե այս բոլորին ավելացնենք նաև այն,
վոր շարժական խաղերը բարեխաղում են և ու-
ժեղացնում շնչառութիւնը, արչան շրջանառու-
թիւնը, մարսողութիւնը, սրտի աշխատանքը և
նյարդային համակարգութիւնը, բոլորի համար
պարզ և անժխտելի յե դառնում խաղերի ոգուտը
և նշանակութիւնը պատանիների և փոքրահա-
սակների համար:

Բայց, վորպեսզի խաղերը տան ցանկալի
արդիւնք, իսկապես զարգացնեն և դաստիարա-
կեն պատանիներին, անհրաժեշտ է ճիշտ և նպա-

տակահարմար անցկացնել խաղերը: Վերոհիշյալ
նպատակին հասնելու համար խաղերի ղեկավար-
ները և կազմակերպողները պետք է հաշվի առ-
նեն հետևյալ պայմաններն ու ցուցմունքները:

2. Խաղի ընտրությունը

Խաղի ընտրութիւնը կախած է մի շարք
պայմաններից, վորոնք պետք է ինկատի ունե-
նալ: Նախ և առաջ պետք է հաշվի առնել հրա-
պարակի, խաղի տեղի դրութիւնը. փոշոտ, բար-
ձարոտ և այլն պակասութիւնն ունեցող հրա-
պարակներում բավականին դժվար է վորևէ խաղ
կազմակերպել և վորոշ ոգուտ ստանալ: Յեր-
բեմն ավելի նպատակահարմար է այդպիսի տե-
ղերում հրաժարվել խաղ կազմակերպելուց, վո-
րովհետև վնասն ավելի մեծ կլինի, քան ոգուտը:

Նշանակութիւնն ունի նաև յեղանակը. ո-
րինակ՝ ցուրտ յեղանակներին պետք է ընտրել
ավելի արագ խաղեր, վորի ընթացքում մաս-
նակցողները կարողանան տաքանալ, շոգ յեղա-
նակներին՝ ընդհակառակը:

Ինկատի պետք է ունենալ խաղացողների
սեռը և աճյալն ընտրել խաղը. վորոշ խաղեր
աղջիկներին չեն թույլատրվում, որինակ՝ «հեծե-
լազոր», «խերկար ձի», «ջորի» և այլն:

Մասնակցողների հասակը հսկայական նշա-

նակություն ունի: Տարբեր հասակների ուժը և պահանջները տարբեր են: Չի կարելի թույլ տալ, վոր միևնույն խաղում մեծերը և փոքրերը միասին խաղան, վորովհետև յեթե խաղը բարդ է, փոքրահասակները շատ շուտ կհոգնեն, իսկ ընդհակառակը, յեթե պարզ է, մեծերը կձանձրանան և կխանգարեն փոքրերին:

Հաշվի պետք է առնել նաև խաղացողների քանակը, վորովհետև մի խաղի ժամանակ խաղացողները քչության դեպքում կհոգնեն, իսկ հակառակ դեպքում բոլորը մասնակցելու հնարավորութիւն չեն ստանա և ձանձրուլթի պատճառով կխանգարեն մյուսներին: Վորոշ խաղեր մասնակցողների քչության հետևանքով կազմակերպել չի կարելի. բացի այս լուրջ ուշադրութիւն պետք է դարձնել խաղացողների առողջութեան վրա. պետք է հաշվի առնել նրանց հոգնածութիւնը և աշխատանքի ձևը:

Այս բոլորը հաշվի առնելուց հետո պետք է այնպիսի խաղեր ընտրել, վորի ընթացքում բոլորն աւտիվ կերպով մասնակցեն և չձանձրանան. պետք է աշխատել հասարակ և պարզ խաղերից հաջորդաբար անցնել ավելի բարդ խաղերի: Խաղերն այնպես պետք է հաջորդեն միմյանց, վորպեսզի ընդհանուր զարգացման և դաստիարակման բոլոր ելեմենտները լինեն:

Գրքի յուրաքանչյուր բաժնի սկզբում գետեղված են ավելի պարզ, իսկ վերջում բարդ խաղերը:

3. Խաղի վայրը

Խաղի վայրը—հրապարակը նախ և առաջ պետք է բավականին ընդարձակ լինի, վորպեսզի հնարավոր լինի բոլոր խաղերը կազմակերպել: Փոշոտ հրապարակներից, վորպես որենք, պետք է հրաժարվել, վորովհետև խաղի ժամանակ արագանում է խաղացողների շնչառութիւնը և, փոխանակ մաքուր ոդ ներշնչելու, ստիպված են լինում թոքերը լցնել փողով: Նպատակահարմար և առողջարար պետք է համարել կանաչով ծածկված հրապարակը: Հրապարակները պետք է շրջապատված լինեն ծառերով կամ ավելի լավ է, յերբ գտնվում են անտառի մոտ: Խմելու և լողանալու ջրով պետք է ապահովված լինի հրապարակը, վորպեսզի մասնակցողները խաղից հետո լողանան կամ ջրով շփեն մարմինը:

4. Խաղացողների զգեստը

Խաղացողները պետք է հագնված լինեն վորքան կարելի յեթեթե, վորպեսզի մարմինը մեծ մասը բաց լինի և յենթակա արևի ու ոդի ոգտակար ազդեցութեան: Ամենալավագույն զգեստը կարճ տրուսիկն է և, յեթե յեղանակը հով է, անթե կամ կարճ թևով շապիկը: Կոշիկները ես պետք է

Թեթև լինեն և չխանգարեն շարժումներին: Յեթե հրապարակը մաքուր է և անվտանգ, լավ է բոլորովին բորելի խաղալ: Խաղի ժամանակ գլուխը պետք է բաց լինի:

5. Խաղի ժամանակը

Հով յեղանակներին խաղերը պետք է կազմակերպել մինչև ճաշը, իսկ շոգ յեղանակներին, ընդհակառակը, ճաշից հետո, յերբ սկսում է հովանալ: Խաղերը պետք է անկացնել մինչև ուտելը, իսկ յեթե այդ հնարավոր չի, ուտելուց յերկու ժամ հետո:

6. Խաղն սկսելը

Խաղն ընտրելուց հետո պետք է բացատրել խաղի ելությունը և կանոնները, ընտրել առաջնորդներ և բաժանել խմբերի, յեթե խաղը պահանջում է: Այս բոլորից հետո, յերբ խաղացողները տեղավորվում են իրենց տեղը, սուրիչով կամ ալ ազդանշանով սկսվում է խաղը:

7. Ղեկավարի պարտականությունները

Խաղի այս կամ այն արդյունքը կախված է ղեկավարից, նրա ընդունակություններից: Ղեկավարը պետք է որինակ լինի բոլորի համար, պետք է վայելի խաղացողների հարգանքը, ղեկա-

վալն ինքը պետք է լավ իմանա խաղը և նրա կանոնները, պետք է արդար կերպով լուծի խաղի ընթացքում գոյացող վեճերը և վոչ մի դեպքում չպաշտպանի վերևե խմբի կամ անհատի շահերը:

Առանց կարգապահության վոչ մի խաղ չի տա ցանկալի արդյունք, ուստի ղեկավարը պետք է ամեն կերպ հետևի, վոր խաղի կանոնները ճշտությամբ կատարվեն, խաղի ընթացքում ավելորդ խոսակցություններ չլինեն, և խաղացողները կոպտություններ չանեն. մեղավորները և ընկերներին խանգարողները պետք է դուրս գան խաղից և վորոշ պատիժ կրեն:

Անտեղի խաղը չպետք է ընդհատել, այլ աշխատել սխալներն ուղղել խաղի ընթացքում: Պարզ և հասարակ խաղերից հաջորդաբար պետք է անցնել ավելի բարդերին, և մինչև մի խաղը կանոնավոր չլուրացվի, նորին չանցնել: Խաղի տևողությունը սահմանում է ղեկավարը և յերբեք խաղացողներին հոգնածություն չի հասցնում:

Ղեկավարը պետք է հետևի առողջապահության կանոններին, վորովհետև միայն այդ դեպքում կստացվի ցանկալի արդյունք, միայն այդ դեպքում խաղն ոգտակար կլինի: չպետք է թուլ տալ բրտնած ջուր խմել, լողանալ կամ նստել: Խաղից անմիջապես աշխատանքի չպետք է ացնել, այլ 10 – 15 րոպե ընդմիջումից հետո:

I. ՀԱՍԱՐԱԿ ԽԱՂԵՐ

Այս բաժնում գետեղված խաղերն իրենց կանոններով ավելի պարզ են և մեծ մասը կարելի չե անցկացնել փոքրահասակների, հոկտեմբերիկների հետ: Այս խաղերում մասնակցողները հնարավորություն ունեն շատ չհոգնել և ցանկացած ժամանակ կարող են դուրս գալ խաղից և հանգստանալ:

Ձնայած վոր այս բաժնի խաղերն իրենց կանոններով բավականին պարզ են և հասարակ, այնուամենայնիվ ղեկավարը պետք է հետևի և պետք չեղած դեպքում ընդհատի խաղը, վորպեսզի չերեխաները չհոգնեն:

Այս խաղերը զարգացնում են ամբողջ մարմինը, գլխավորապես սիրտը, թոքերը և վոտքերը:

1. ՀԱՐՎԱԾ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ:

Խաղի բացատրությունը: Խաղացողներն իրենց միջից ընտրում են մեկ հարվածող: Հեկավարի ազդանշանով սկսվում է խաղը. բոլորը ցրվում են հրապարակում, իսկ հարվածողը վազում է խաղացողների յետևից և աշխատում է հարվածել վորևե մեկին: Հարված ստացողը

դառնում է հարվածող և իր հերթին աշխատում է հարվածել մի ուրիշին:

Խաղի կանոնները: Հարված ստացողը կարող է հարվածել բոլորին, բացի իրեն անմիջապես հարվածողից: Խաղացողները հրապարակի սահմանից դուրս գալու իրավունք չունեն:

2. ՀԱՐՎԱԾԵԼ ԱՆՏՈՒՆՆԵՐԻՆ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ, վորի կենտրոնում գծում են մեկ շրջան:

Խաղի բացատրությունը: Խաղացվում է ինչպես նախորդը, միայն այն տարբերությամբ, վոր շրջանի (տան) մեջ չեղածներին հարվածել չի կարելի: Տունը (շրջանը) այս խաղում հանդիսանում է հանգստավայր, հոգնողներն անվտանգ կարող են մտնել շրջանը և այնտեղ մնալ վորքան կցանկանան: Յերբ խաղացողները շատ են, կարելի չե գծել միջանի տուն:

Խաղի կանոնները: Տան սահմանների մեջ չեղած խաղացողներին հարվածել չի կարելի: Յուրաքանչյուր հարված ստացող խաղացող իր հերթին պետք է դառնա հարվածող:

3. ՀԱՐՎԱԾԵԼ ՄԵԿ ՎՈՏՔՈՎ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ փոքր հրապարակ կամ դահլիճ:

Խաղի բացատրությունը: Վորպեսզի խաղացողները շուտ չհոգնեն, և խաղը հետաքրքիր լինի, հրապարակը պետք է փոքր լինի: Այս խաղում հարվածողը և բոլոր խաղացողները վազում են և հարվածներից խուսափում մեկ վտոքի վրա կանգնելով: Նախորոք պետք է համաձայնվել աջ թե՛ ձախ վտոքով ցատկելու մասին:

Խաղի կանոնները: Յերկու վտոքն էլ գետին դնել կարելի չե՝ միայն կանգնած ժամանակ: Վազքի ժամանակ յերկու վտոքը գետին դնողը համարվում է հարված ստացած և անպայման պետք է հարվածող դառնա: Հարվածողը կարող է հանգստանալ:

4. ՀԱՐՎԱԾԵԼ ԳԵՏՆԻՑ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ, վորտեղ պետք է լինեն քարեր կամ ծառեր:

Խաղի բացատրությունը: Տարբերվում է մյուս խաղերից նրանով, վոր հարվածել կարելի չե՝ միայն գետնի վրա կանգնածին, գնացողին կամ վազողին: Յեթե խաղացողը ադիվում է գետնից, այսինքն վեր է ցատկում, չելնում է քարի, բնի վրա կամ կախվում է ծառի ճյուղից, պարանից, հարվածել չի կարելի, մինչև մարմնի վորևե մասով գետնին չկպչի:

Խաղի կանոնները: Հարվածել կարելի չե, չե՝ թե մարմնի չնչին մասով դիպչի գետնին: Սահմանից դուրս վազողը համարվում է հարված ստացած:

5. ՀԱՐՎԱԾԵԼ ՄԵԿԻՆ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ հարթ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Նախորդներից տարբերվում է նրանով, վոր հարվածել չի կարելի, յերբ խաղացողներն իրար ձեռքից բռնելով զույգեր են կազմում:

Խաղի կանոնները: Յեթե խաղացողները զույգ են կազմում հարված ստանալու մոմենտին, հարվածը հաշվում է:

6. ՀԱՐՎԱԾԵԼ ՆՍՏԱԾԻՆ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ՝ կանաչով ծածկված:

Խաղի բացատրությունը: Այս խաղում հարվածներից ազատվում են նրանով, վոր ծալապատիկ նստում են գետնի վրա: Եթալ նստողներին հարվածել կարելի չե:

Խաղի կանոնները: Նստելու ըրպեյին հարվածել կարելի չե: Զի կարելի հարվածել նախորդ հարվածողին:



7. ՀԱՐՎԱԾԵԼ ԶԻԱՎՈՐԻՆ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Այս խաղում հարվածներին ազատվում են ձիավորները, այսինքն, յերբ մեկը ցատկում է և նստում մյուսի մեջքին: Այս դեպքում չի կարելի հարվածել վոչ ցատկողին և վոչ ել նրան, ում մեջքին վոր ցատկել են: Այս խաղն ավելի հետաքրքիր է, վորովհետև խաղացողները կարող են թույլ չտալ իրենց մեջքին նստելու, յեթե իրենք անմիջական վտանգի մեջ չեն գտնվում:



Խաղի կանոնները: Վտանգն անցնելուն պես պետք է իջնել ընկերոջ մեջքին: Չի կարելի ուժով նստել կամ ցատկել ընկերոջ մեջքին:

8. ՀԱՐՎԱԾԵԼ ԶՈՐՔՈՏԱՆԻ

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ մաքուր հրապարակ:

Խաղի բացատրությունը: Այս խաղում հարվածել չի կարելի այն խաղացողներին, վորոնց վորտքերի թաթերը գետնին չեն դիպչում:

Խաղացողներն ազատվում են հարվածներից:

Իրից մեջքի վրա պառկելով և վորտքերը բարձրացնելով կամ չորեկով և ձեռքերը գետնին դնելով:



Խաղի կանոնները: Պառկած մնալ չի կարելի. վտանգն անցնելուն պես պետք է վեր կենալ:

9. ՄՈԼԿԻ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Խաղացողների քանակը՝ 15—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ:

Խաղի բացատրությունը: Խաղացողներն իրար ձեռքերից բռնած շրջան են կազմում: Ընտրում են 'մեկ մուկ և մեկ կատու: Մուկը մտնում է շրջանի մեջ, իսկ կատուն աշխատում է բռնել նրան: Խաղացողները մկանն ազատ ներս



ու դուրս են թողնում: Բարձրացնելով ձեռքները, իսկ կատուին աշխատում են վոչ մի տեղից չթող-



15096-57

ներ: Կատվի ներս կամ դուրս վազելու ժամանակ իջեցնում են ձեռքերը և պազում: Յերբ մուկը բռնվում է, նոր մուկ ու կատու լիննշանակում և խաղը շարունակում:

Խաղի կանոնները: Մուկը բռնված է համարվում, յերբ կատուն ձեռքով կկպչի նրան: Այբով շրջանը խաղի ժամանակ մեկ աջ, մեկ ձախ ե պտտվում:


10. ՅԵՐԿՈՒ ԿԱՏՈՒ, ՄԵԿ ՄՈՒԿ

Խաղացողների քանակը՝ 30—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները կազմում են յերկու շրջան, մեկը մեծ—արտաքին, իսկ մյուսը փոքր—ներսի: Ընտրում են յերկու կատու և մեկ մուկ: Յերկու կատուն ել աշխատում են բռնել մկանը: Մուկն ամեն տեղից ներս մտնելու և դուրս գալու իրավունք ունի, իսկ կատունները ներս մտնել կամ դուրս գալ կարող են միայն դարպասներից:

Խաղի կանոնները: Յերկու շրջանն ել իրար հակառակ կողմից ազատ տեղ են թողնում, վո-



րոնք կոչվում են դարպասներ: Շրջաններից մեկը պտտվում է դեպի աջ, իսկ մյուսը՝ դեպի ձախ: Մուկը բռնվելուց հետո նշանակվում են նոր կատուներ և մուկ: Յուրաքանչյուր նոր կատուներ ու մուկ ընտրելուց հետո շրջանները պտտվում են հակառակ կողմը:

11. ՄԿՆԵՐ ՈՒ ԿԱՏՈՒՆԵՐ

Խաղացողների քանակը՝ 50—120 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները ձեռքերից բռնած շրջան են կազմում: Նշանակվում են մի քանի կատու և նույնքան ել մուկ: Յուրաքանչյուր կատու պետք է բռնի մեկ մեկ կամ իր մուկը, վորը պետք է նախորոք նշանակել: Կարելի չէ մեկ շրջանի փոխարեն մի քանի շրջան կազմել:

Խաղի կանոնները: Կատուներն իրենց մկները բռնելուց հետո ընդհանուր շրջան են կանգնում: Բոլոր մկները բռնելուց հետո նշանակվում են նոր մկներ ու կատուներ:

12. Կ Ա Ր

Խաղացողների քանակը՝ 30—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Խաղացողներն ի-

րար ձեռքերից բռնած շրջան են կազմում: Ընտրում են յերկու հոգի, վորոնցից մեկը կատարելու յե ասեղի դեր, իսկ մյուսը՝ թելի դեր: Ասեղը վազում ե շրջանով խաղացողներին թեքի տակից և կարելու զանազան ձևեր անում: Թելն աշխատում ե նրան բռնել՝ նույնությամբ կատարելով կարի ձևերը: Թելն ասեղին բռնելուց հետո ինքը դառնում ե ասեղ. բռնված ասեղն ընդհանուր շրջանն ե մտնում: Նշանակվում ե նոր թել, և խաղը նույնությամբ շարունակվում ե:

Խաղի կանոնները: Յեթե թելը խճճվում ե, այսինքն չի կարողանում նույնությամբ կատարել ասեղի կատարած ձևերը, փոխարինվում ե նորով: Խաղի ժամանակ շրջանի խաղացողները մի լրիվ շրջան դեպի աջ կողմն են անում, մի լրիվ շրջան՝ դեպի ձախ:

13. ԴՍԱՐԿ ՏԵՂ

Խաղացողների քանակը՝ 20—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները դեմքերը դեպի կենտրոն դարձրած խիտ շրջան են կազմում. մեկը նշանակվում ե անտեղ: Սուրճից հետո անտեղ մնացողը շրջում ե շրջանի չորս կողմը և հարմար առիթ գտնելով՝ հարվածում ե մեկնումեկի մեջքին և վազում աջ կամ

ձախ (նախորոք պետք ե պայմանավորվել) կողմը: Հարված ստացողը վազում ե հակառակ կողմը. յերկուսն ել աշխատում են արագ շրջել շրջանը և գրավել ազատ տեղը: Ուշացողը դառնում ե անտեղ և շարունակում ե խաղը: Մաղն ավելի հետաքրքիր դարձնելու համար պայմանավորվում են շրջելու ժամանակ հանդիպելիս զանազան ձևականություններ անել, որինակ՝ իրար ձեռք տալ, պզզել, նստել և այլն:

Խաղի կանոնները: Ուժեղ հարվածել չի թույլատրվում: Հարված ստացողն անպայման պետք ե վազի հակառակ կողմը: Շրջանի խաղացողները յետ չպետք ե նային:

14. ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՇՆԵՐԸ

Խաղացողների քանակը՝ 30—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Ընտրում են մի քանի շուն և տասից—տասնհինգ նապաստակ: Մյուսները ձեռքերից բռնած շրջան են կազմում, վորի ներսում—բանջարանոցում գտնվում են շները: Շրջանը մի վորեւ տեղում բացվում ե և յերեքից—հինգ մետր տարածությամբ դարպաս կազմում: Նապաստակներն աշխատում են այնպես մտնել բանջարանոցը և դուրս գալ, վոր շները չբռնեն նրանց: Շները բանջարանոցի

պահակներն են և ներս մտած նապաստակին պետք է բռնեն: Շրջան կազմող խաղացողներն ոգնում են շներին և դարպասից ներս մտած նապաստակներին դուրս չեն թողնում, իջեցնելով ձեռքերը և պզգելով: Բոլոր նապաստակներին բռնելուց հետո նշանակում են նորերը և խաղը շարունակում:

Խաղի կանոնները: Նապաստակներն ազատ իրավունք ունեն դարպասից ներս մտնելու և դուրս գալու: Շները շրջանից դուրս չեն գալիս: Դարպասը միշտ բաց է լինելու:

15. ԿԱՆՁԻՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Խաղացողների քանակը՝ 20—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Բոլոր խաղացողները, բացի յերկուսից, տարածած ձեռքերի հեռավորություն վրա շրջան են կազմում և մեկից մինչ վերջ թիվ տալիս, այնպես վոր յուրաքանչյուր խաղացող ունենա իր համարը: Շրջանից դուրս մնացածներից մեկը վազում է, իսկ մյուսն աշխատում է բռնել նրան: Վազում են շրջանի դրսից, բայց իրավունք ունեն յուրաքանչյուր ցանկացած դեպքում վազել շրջանի ներսը և կանչել վորեւ համար: Կանչված հա-

մարն իսկույն ևեթ պետք է փոխարինի իրեն կանչողին և իր տեղը զիջի նրան:


Խաղի կանոնները: Թե փախչողը և թե բռնվողը իրավունք ունեն իրենց փոխարինող կանչելու: Շրջանի ներսը մտնել կարելի չէ միայն փոխարինող կանչելու համար:

16. ՅԵՐՐՈՐԴՆ ԱՎԵԼՈՐԴ Ե

Խաղացողների քանակը՝ 12—50 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ:

Խաղի բացատրությունը: Խաղացողներն իրար ձեռքերից բռնած զույգեր են կազմում. զույգերն իրարից յերեք-չորս քալ հեռավորության վրա շրջան են կազմում:



Խաղացողներից մեկը նշանակվում է «չեր-րորդ», իսկ մյուսը՝ «հետապնդող»: Ազդանշանով սկսվում է խաղը. յերրորդը փախչում է, իսկ հետապնդողն ընկնում է նրա յետևից և աշխա-

տում ե բռնել:



Յերրորդն ազատվելու համար ներս ե մտնում վորևե զուգի միջև: Զուգի այն խաղացողը, վորի առաջ մեջքով կանգնում ե յերրորդը, փոխարինում ե նրան և սկսում վազել: Նախորդ յերրորդը

բռնում ե մնացողի ձեռքից և զուգ կազմում: Նոր յերրորդն ազատվելու համար դարձյալ ներս ե մտնում վորևե զուգի միջև, և այսպես շարունակվում ե խաղը: Յեթե վորևե յերրորդ մինչև զուգի հասնելը բռնվում ե, ինքը դառնում ե հետապնդող. իսկ նախկին հետապնդողը դառնում ե յերրորդ և փախչում:

Խաղի կանոնները: Պետք ե վազել միայն շրջանի դրսի կողմից: Զուգի միջև մտնելիս չի կարելի շրջվել: Պետք ե աշխատել շուտ-շուտ փոխվել, վորպեսզի խաղը ձանձրալի չդառնա, և բոլորը մասնակցեն:

17. ԱՎԵԼՈՐԴԸ ՔԵՎԱՆՅՈՒԿ

Խաղացողները քանակը՝ 12—50 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ:

Խաղի բացատրությունը: Խաղը նման ե նախորդին, այն տարբերությունը, վոր այնտեղ խաղացողները շրջան են կազմում թևանցուկ,

իսկ ազատ ձեռքերը դնում են կոնքերին, կանգնում են դեմքերով դեպի կենտրոն իրարից յեռեք-չորս բալլ հեռավորությամբ: Նույնպես նշանակվում են «ավելորդ» և «հետապնդող»: Ավելորդն ազատվում ե հետապնդողից, զուգերի խաղացողներին մեկին թևանցուկ վերցնելով: Ավելորդին փոխարինում ե զուգի այն խաղացողը, վորին թևանցուկ չեն վերցրել:



Խաղի կանոնները: Վազել կարելի չե շրջանի ներսից և դրսից: Մնացածումնման ե նախորդին:

18. ՅԵՐԿՈՒՍԻՅ ՄԵԿԻՆ

Խաղացողները քանակը՝ 10—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները զուգեր կազմած կանգնում են մեկը մյուսի յետևից: Շարքի առաջ կանգնում ե ընտրված խաղացողը, վորն առանց յետ նայելու հաշվում ե՝ «մեկ, յերկու, յերեք»: Յերեք ասելուց հետո

շարքի վերջին զույգի խաղացողները բաժանվում են իրարից և մեկը շարքի աջ կողմից, մյուսը ձախ կողմից վազում են առաջ, աշխատելով կրկին զույգ կազմել: Շարքի առաջին կանգնողը վազում է և աշխատում մեկնումեկին բռնել: Յեթե հաջողվում է բռնել մինչև զույգ կազմելը, ինքը բռնվածի հետ զույգ է կազմում և կանգնում է շարքի առաջ, իսկ մյուսը դառնում է նոր բռնողը և շարունակում է խաղը: Չբռնելու դեպքում խաղը շարունակում է դարձյալ նախկինը:



Խաղի կանոնները: Ձուլգեր պետք է կազմել շարքից առաջ: Ձուլգ կազմողներին բռնել չի կարելի: Նոր կազմվող զույգերը կանգնում են շարքի առաջ:

19. ՀՐԱՎԵՐ

Խաղացողների քանակը՝ 20—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները յերկու հավասար խմբի բաժանվելով կանգնում են իրար դիմաց յերեսուհից հիսուն քայլ հեռավորության վրա, յուրաքանչյուր խումբը ընտրում է իր ղեկավարը, Վիճակով խմբերից մեկի ղեկավարն ուղարկում է իր խաղացողներից մեկին

դեպի հակառակ խումբը հրավիրելու: Ընդունող խումբը պարզում է իր աջ կամ ձախ ձեռքն, ուղարկվածը յերեք հարված է հասցնում միևնույն խաղացողի կամ տարբեր խաղացողների ձեռքերին և արագ յետ վազում դեպի իր խումբը: Վերջին հարված ստացողը վազում է սրա յետևից և աշխատում բռնել կամ հարվածել: հաջողվելու դեպքում ուղարկվածին գերի յե վերցնում, հակառակ դեպքում ինքն է գերի ընկնում: Հաջորդ անգամ հրավիրվում է մյուս խումբը, և այսպես շարունակում են խաղը մինչև վորևե խմբի մեծ մասը գերի ընկնի:

Խաղի կանոնները: Մինչև յերրորդ հարվածը վոչվոք տեղից չպետք է շարժվի: Հրավիրողին կարելի յե բռնել մինչև իր խմբին հասնելը: Խմբերի կանգնած տեղը նշանակվում է գծով:

20. ՏԱՆԿԱ

Խաղացողների քանակը՝ 10—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ:

Խաղի բացատրությունը: Խաղացողներն յերարից մեկական քալլ հեռավորությամբ կանգնում են իրար յետևից և շարք կազմում: Ագլանշանով բոլորը յայն (մեկ քալլի հեռավորությամբ) բացում են վտրքերը: շարքի վերջին

խաղացողը կանգնում է վոտքերի և ձեռքերի վրա և արագ անցնում է շարքի վոտքերի միջից և դուրս գալուց հետո կանգնում է շարքի առաջը և վոտքերը տարածում: Հենց վոր առաջին սողացողը կանցնի իր մարմնի յերկարության չափ, նրան հետևում է հետևյալը, և այսպես շարունակ, մինչև բոլորը հերթով անցնեն վոտքերի միջից:

Խաղի կանոնները: Պետք է աշխատել արագ սողալ, վորպեսզի շարժվող տանկայի տպավորությունն ստացվի: Սողացողների միջև պետք է հավասար տարածություն լինի: Վոտքերի միջից անցնողները շարքի առաջին կանգնողից մի քաջ առաջ են կանգնում:

21. ԿԾԻԿ

Խաղացողների քանակը՝ 20—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բռնում են իրար ձեռքերից և զույգեր կազմում: Զույգերը կանգնում են իրար յետևից յերեք քաջ հեռավորությամբ և շարք կազմում: Զեռքերը վեր են բարձրացնում և կամար կազմում: Սուղիչով սկսվում է խաղը. վերջին զույգն իջեցնում է ձեռքերը և միջից պալգելով արագ անցնում են կամարի տակից. վերջինին հետևում

է նախավերջինը և այսպես մինչև բոլորը կանցնեն: Կամարի տակից անցնողները դուրս գալուն պես կանգնում են շարքի առաջը և կամար կազմում:

Խաղի կանոնները: Կամարի տակից անցնելիս ձեռքերը բաց թողնել չի կարելի: Կամարը միշտ բարձր պետք է լինի: Կամարի տակից դուրս յեկող զույգերը կանգնում են շարքից յերեք քաջ առաջ:

22. ՈՁ

Խաղացողների քանակը՝ 15—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Ընտրվում են յերկու հոգի. մեկը ոձի «գլուխ», իսկ մյուսը՝ ոձի «պոչ»: Մյուս բոլոր խաղացողները կանգնում են իրար յետևից և շարք կազմում: Գլուխը կանգնում է շարքի առաջը, իսկ պոչը՝ շարքի վերջը: Ղեկավարի հրահանգից հետո բոլորը բռնում են միմյանց կոնքերից և «մեկ, յերկու, յերեք» ասելուց հետո սկսում են խաղը: Խաղի ելությունը կայանում է նրանում, վոր գլուխն աշխատում է բռնել պոչը, իսկ վերջինս աշխատում է բռնել պոչը, իսկ վերջինս աշխատում է բռնել պոչը: Ոձի մարմեն կերպ խուսափում է նրանից: Ոձի մարմինը, այսինքն ամբողջ շարքն ոգնում է գլխին և նրա շարժումներին համապատասխան շար-

ժողովներ ե կատարում. քայլում ե, վազում, թեքվում ե աջ կամ ձախ կողմը և այլն: Յերբ պոչը բռնվում ե, խաղը դադարեցվում ե. ընտրվում են նոր գլուխ և պոչ, և ապա շարունակվում ե խաղը:

Խաղի կանոնները: Ոձի մարմինը, շղթան, չպետք ե կտրվի, իսկ կտրվելու դեպքում խաղը դադարեցվում ե մինչև կտրված մասի միանալը:

23. ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ

Խաղացողների քանակը՝ 15—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Ընտրում են մի «գալլ», իսկ մյուս խաղացողները շարք են կազմում և բռնում իրար կոնքերից: Շարքի առաջին կանգնողը կոչվում ե «հովիվ», իսկ վերջինը՝ «գառ»: Ղեկավարի սուլիչով սկսվում ե խաղը. գալլը հարձակվում ե շարքի վրա և ուզում ե հոշոտել գառին, բայց հովիվը տարածում ե ձեռքերը և դիմադրում: Ամբողջ շարքն ոգնում ե հովիվին և առանց բաժանվելու շարժվում ե այն կողմ, վորն ավելի անվտանգ ե: Յերբ գառը բռնվում ե, նշանակվում են նոր գալլ, հովիվ, գառ և խաղը վերսկսում:

Խաղի կանոնները: Շարքն սկզբից մինչև վերջը չպետք ե բաժանվի: Հովիվն իրավունք չունի գալլին բռնելու:

II. ԽՄԲԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Այս ըստի խաղերից մեծ մասում խաղացողները մասնակցում են վոչ թե վորպես անհատներ, այլ վորպես խմբի, կոլեկտիվի անդամներ: Անհատը յենթարկվում ե կոլեկտիվին և նրա պահանջներին: Այս խաղերում խմբերը կազմվում են ըստ քանակի և ուժի: Խմբերի բաժանվում են խաղի սկզբում, կամ խմբերը կազմվում են խաղի ընթացքում: Իրենց կանոններով այս խաղերն ավելի բարդ են, և հաջողութունը գլխավորապես կախված ե ամբողջ խմբի ընդունակութուններից և կազմակերպվածութունից:

1. ՏՐԱԿՏՈՐՆԵՐ

Խաղացողների քանակը՝ 10—100 հոգի և ավել (յուրաքանչյուր խմբում 5—20 հոգի):

Խաղի տեղը՝ հրապարակ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են մի քանի հավասար խմբերի և իրարից յերկու քալ հեռավորության վրա շարքեր կազմում: Յուրաքանչյուր խմբի խաղացող ձեռքերը դնում ե իր առաջ կանգնած ընկերոջ ուսերին: Խմբերի առաջին խաղացողների առաջ քաշում են մեկ ուղիղ գիծ, իսկ այդ գծից յերեսուն քալ հեռու՝ ևս մի զուգահեռ գիծ: Հրահանգով բոլոր խմբերն առանց բաժանվելու ձեռ-

խաղի ընթացքը
գրված է

քերն առաջինների ուսին վազում են դեպի գու-
գահեռ գիծը: Յերբ առաջին խաղացողները լեր-
կու վտարով ել կանգնում են գծի վրա, գոռում
են՝ «կանգնիր»: Այս խոսքից հետո խմբի բոլոր
խաղացողներն առանց տեղերից շարժվելու յետ
են դառնում, ձեռքերը կրկին դնում առաջին-
ների ուսերին և արագ վազում դեպի նախկին
տեղը. գծին հասնելուն պես յետ են դառնում:
Հաղթում է այն խումբը, վորը շուտ տեղ կհաս-
նի և կընջվի:

Խաղի կանոնները: Ճանապարհին բանդվող
տրակտորը պետք է նորից կպչի և ապա շարու-
նակի վազքը, հակառակ դեպքում համարվում
է հաղթված: Հաղթվում է նաև այն տրակտորը,
վորը գծին չհասած յետ է դառնում:


2. ՑԵՐԵԿ ՅԵՎ ԳԻՇԵՐ

Խաղացողների բանակը՝ 20—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 40×20 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի յեր-
կու ծայրերում անց են կացնում լերկու մեծ
գիծ, վորոնք ներկայացնում են քաղաքների սահ-
մանը: Խաղացողները բաժանվում են լերկու
խմբի. խմբերից մեկը կոչվում է «ցերեկ», իսկ
մյուսը՝ «գիշեր»: Ցերկու խումբն ել տեղավոր-
վում են իրենց քաղաքներում և դեկավարի ազ-

դանշանով շարժվում են դեպի կենտրոն, ուր
կանգնում են իրարից 3 քալ տարածության



վրա մեջքերն իրար դարձը-
րած: Ղեկավարն իր մոտ ու-
նի փոքրիկ տախտակ, վորի
մի կողմն սպիտակ է, իսկ
մյուս կողմը սևացած է (տախ-
տակի փոխարեն կարելի է
գործածել տափակ քար, վո-
րի մի կողմը չոր է, իսկ մյուս
կողմը՝ թաց): Այդ տախտակը
նետում է դեպի վեր, և յե-
թե տախտակը գետին է

ընկնում սև կողմով դեպի վեր, դեկավարը գո-
չում է «գիշեր». գիշեր ներկայացնող խումբն
իսկույն ևեթ վազում է դեպի իր քաղաքը, իսկ
ցերեկ ներկայացնող խումբն ընկնում է նրանց
յետևից և աշխատում է բռնել, մինչև վոր նրանք
կհասնեն իրենց քաղաքը: Ցեթե տախտակն ընկ-
նում է սպիտակ կողմով դեպի վեր, դեկավարն
այս դեպքում գոչում է «ցերեկ». ցերեկ խումբը
ապա դեպքում գոչում է «ցերեկ», իսկ գիշեր խում-
բը հետապնդում է սրանց և աշխատում է բռ-
նել: Բռնված խաղացողները գերի չեն ընկնում
և դուրս են գալիս խաղից: Վորոշված ժամա-
նակն անցնելուց հետո խաղն ավարտվում է.

Գիտնական խաղեր—2

հաղթում եւ այն խումբը, վորն ավելի շատ գերի չե վերցնում:

Խաղի կանոնները: Խաղացողները բռնված են համարվում, յերբ նրանց դիպչում են ձեռքով կամ հարվածում են: Այն խաղացողներին, վորոնք անցել են իրենց քաղաքի սահմանը, բռնել կամ հարվածել չի կարելի: Յուրաքանչյուր խաղացող իրավունք ունի մի քանի հոգի բռնելու:

3. ՅԵՐԿՈՒ ՍԱՌՆԱՄԱՆԻՔ

Խաղացողների քանակը՝ 10—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 49×30 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի չերկու ծայրերում գծում են մեկական մեծ շրջան և կոչում «գյուղեր»: Վիճակով ընտրվում են յերկու հոգի, վորոնք կոչվում են «սառնամանիք յեղբայրներ», իսկ մնացած բոլոր խաղացողները դառնում են «գյուղացիներ», վորոնք տեղավորվում են գյուղերից մեկում: «Սառնամանիք յեղբայրները» կանգնում են հրապարակի կենտրոնում և ասում. «Ով չի վախենում սառնամանիքից, թող դուրս գա գյուղից». սրան գյուղացիները պատասխանում են. «Մենք չենք վախենում սառնամանիքից» և վազում են դեպի մյուս գյուղը: Սառնամանիքներն ընկնում են

սրանց յետևից և աշխատում են «սառնել» սրանց, այսինքն կաշել ձեռքով: Նրանք, ում կըպչում են սառնամանիքները, սառչում և անշարժ մնում են իրենց տեղերում: Յերբ գյուղացիները հասնում են մյուս գյուղը, «սառնամանիք յեղբայրները» կանգնում են հրապարակի կենտրոնում, և խաղը նույնությամբ շարունակվում եւ, այսինքն սառնամանիքները դարձյալ կանչում են, իսկ գյուղացիները վազում են դեպի մյուս գյուղը: Յերբ գյուղացիների մեծ մասը սառչում եւ, խաղը վերջացվում եւ:

Խաղի կանոնները: Սառածները մինչև խաղի վերջը տեղներից հեռանալու իրավունք չունեն: Կարելի չե պայմանավորվել, վոր վորոշ ժամանակից հետո սառնամանիքները փոխվեն:

4. ՑԱՆՑՆ ՈՒ ԶՈՒԿԸ

Խաղացողների քանակը՝ 15—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 50×40 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի մի ծայրում գծում են մեկ շրջան, վորը կոչվում եւ «կարաս». վիճակով ընտրում են յերկու հոգի «ցանց», իսկ մյուս խաղացողները դառնում են ձկներ և տեղավորվում են հրապարակի ծայրում: Ցանցի խաղացողները բռնում են իրար

ձեռքերից և կանգնելով հրապարակի կենտրոնում՝ կանչում են. «Ձկներ, դեպի ծով».



այս խոսքերից հետո բոլոր ձկները վազում են հրապարակի հակառակ կողմը, իսկ ցանցն աշխատում է բռնել նրանցից վորևե մեկին իրար ձեռքերից բռնելով և շղթա կազմելով: Ողակված ձուկը բռնված է համարվում և գրնում է դեպի կարաս. յերբ ձկները հասնում են հրապարակի մյուս ծայրը, ցանցը կանգնում է կենտրոնում և



կրկին կանչում. «Ձկներ դեպի ծով».

ձկները դարձյալ սկսում են վազել, իսկ ցանցը վազում է նրանց յետևից և աշխատում է բռնել: Յերբ կարասում հավաքվում են յերկու ձուկ, նրանք ևս կազմում են ցանց և դուրս են գալիս վորսի: Բոլոր ձկների բռնվելուց հետո խաղը վերջանում է:

Խաղի կանոնները: Յեթե խաղացողները շատ են, խաղի սկզբում ընտրում են միջանի ցանց. մինչև ցանցի խաղացողներն իրար ձեռքերից բռնեն և ողակ կազմեն, ձկները կարող են ցանցի միջից փախչել. իսկ հենց վոր ողակը կազմվի, ձկները համարվում են բռնված: Յուրաքանչյուր

ցանց միանգամից կարող է միջանի ձուկ բռնել:

5. ԱՂՎԵՍԻ ՎՈՐՍԸ

Խաղացողների քանակը՝ 15—45 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 50×30 մետր:

Խաղի ըացատրությունը: Հրապարակի կենտրոնում և յերկու ծայրերում գծում են շրջաններ: Խաղացողները բաժանվում են յերեք հավասար խմբի, մեկ խումբը կոչվում է «հավեր» և տեղավորվում է կենտրոնի շրջանում, իսկ մյուս յերկու խմբերը տեղավորվում են ծայրի շրջաններում. մեկը կոչվում է «գյուղացիներ», իսկ մյուսը՝ «աղվեսներ»: Հակավարի ազդանշանով սկսվում է խաղը. աղվեսները մեկական կամ խմբերով դուրս են գալիս իրենց շրջանից և հարձակվում են հավաքնի վրա: Նույն բապելին դուրս են վազում գյուղացիները և աշխատում են բռնել աղվեսներին: Աղվեսները բռնված են համարվում, յերբ գյուղացիները հարվածում են նրանց: Վորոշ ժամանակից հետո խաղը վերջանում է, վրից հետո հաշվում են վորսված հավերը և բռնված աղվեսները. յեթե բռնված աղվեսներն ավելի շատ են, քան վորսված հավերը, հաղթում է գյուղացիների խումբը, հակառակ դեպքում հաղթում է աղվեսների խումբը:

Խաղի կանոնները: Հավերը վորսված են համարվում, յերբ աղվեսներից վորևե մեկը բռնում է նրանց ձեռքերից. հավերը փախչելու կամ ընդդիմադրելու իրավունք չունեն. վորսված հավերն աղվեսների հետ գնում են նրանց շրջանը: Յուրաքանչյուր աղվես բուն մտնելիս իրավունք ունի մեկ հավ բռնելու: Աղվեսներին չի կարելի վորսալ, յերբ նրանք գտնվում են հավաքնում կամ յերբ հավի հետ վերադառնում են տուն:

6. ԶԿՆԵՐՆ ՈՒ ԱՐԱԳԻԼՆԵՐԸ

Խաղացողների քանակը՝ 10 — 40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×40 մետր:

Խաղի բացատրությունը: Հալածողները բաժանվում են յերկու խմբի, վորոնցից մեկը կոչվում է «արագիլներ»-ի խումբ, իսկ մյուսը, «ձկներ»-ի խումբ: Հրապարակի մի ծայրում գծում են մեկ մեծ շրջան (արագիլների բուն), ուր տեղավորվում են արագիլները, իսկ ձկները ցրվում են հրապարակում: Հրահանգով բոլոր արագիլներն աջ կամ ձախ (նախորդ պայմանավորվում են) վոտքի վրա ցատկելով դուրս են գալիս վորսի և աշխատում բռնել ձկներին: Հենց վոր ձկներից մեկը բռնվում է, բոլորը, թե արագիլները և թե ձկները, հավաքվում են վորսի դուրջը: Այդ տեղից ձկները, վորպես պատիժ,

շալակում են արագիլներին և տանում մինչև բունը: Սրանից հետո խմբերը փոխում են իրենց տեղերը և խաղը նույնությամբ վերսկսում:

Խաղի կանոնները: Վորսի ժամանակ արագիլներն իրավունք չունեն վորոշված վոտքը փոխել կամ յերկու վոտքի վրա կանգնել: Սխալվելու դեպքում իրենք պետք է շալակեն ձկներին և տանեն մինչև բունը:

7. ՊԱՏՎԱՎՈՐ ՎՈՐՍ

Խաղացողների քանակը՝ 20 — 50 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×50 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողների միջից ընտրվում են յերկու հոգի, վորոնք կոչվում են «վորսորդներ», իսկ մնացած բոլոր խաղացողները կոչվում են «նապաստակներ»: Հրապարակի մի ծայրում գծում են մեկ փոքրիկ շրջան, ուր տեղավորվում են վորսորդները: Նապաստակները տեղավորվում են հրապարակում: Դեկավարի հրահանգից հետո վորսորդները բռնում են իրար ձեռքից և դուրս են գալիս վորսի: Բռնված նապաստակին նստեցնում են ձեռքերի վրա և տանում տուն, վորից հետո կրկին դուրս են գալիս վորսի: Յերկրորդ բռնված նապաստակին նույն կերպ տանում են տուն: Այս նապաստակները նույնպես դառնում են վորսորդ-

ներ և իրար ձեռքերից բռնած դուրս են գալիս վորսի: Խաղի վերջում մնացած չ'ըկու նապաստակը դառնում են: վորսորդ և խաղը վերսկսում:

Խաղի կանոնները: Բոլոր բռնված նապաստակներին պետք է ձեռքերի վրա տանել տուն: այս նապաստակներից յուրաքանչյուր զույգը դառնում է վորսորդ: վորսորդների բոլոր զույգերը գործում են ինքնուրույն:

8. ԱՆՏՈՒՆ ՆԱՊԱՍՏԱԿԸ (ՆԱՊԱՍՏԱԿՆ ՈՒ ՎՈՐՍՈՐԴԸ)

Խաղացողների քանակը՝ 20—100 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 50×100 մետր:

Խաղի քաղաքաբնույթը: Խաղացողներն ընտրում են մեկ նապաստակ և մեկ վորսորդ: մյուսները բաժանվում են քառյակների, յուրաքանչյուր քառյակ իր միջից ընտրում է մեկ նապաստակ և իրար ձեռքերից բռնած շրջաններ կազմում: Ընտրված նապաստակները կանգնում են շրջանների մեջտեղը: Շրջանները տեղավորվում են իրարից 10—15 քալ հեռավորության վրա: Ղեկավարի հրահանգով անտուն նապաստակն սկսում է փախչել, իսկ վորսորդը վազում է նրա յետևից և աշխատում է նրան բռնել: Նապաստակը բռնվելուց ազատվելու համար ներս

է վազում վորեւ շրջան, իսկ շրջանի նապաստակը դուրս է վազում շրջանից և սկսում է փախչել, վորովհետև վորսորդը հետապնդում է նրան և



աշխատում է բռնել: Յերբ վորսորդին հաջողվում է բռնել վորեւ մեկին, այդ դեպքում ի՞նքը դառնում է նապաստակ, իսկ բռնվածը՝ վորսորդ, և խաղն այսպես շարունակվում է:

Խաղի կանոնները: վորսորդն իրավունք ունի նապաստակին բռնել այն դեպքում, չ'ըրբ նա վազում է շրջանների շուրջը կամ շրջանից շրջան: ներս մտնել շրջան և այնտեղ բռնել նապաստակին չի թույլատրվում: շրջանի ներսում լեղած նապաստակներն անձեռնմխելի յեն: Նոր վորսորդն իրավունք չունի նախորդ վորսորդին բռնել, մինչև նա վորեւ շրջան չ'տանի: վորպեսզի բոլոր խաղացողները վազելու հնարավորություն ստանան, անհրաժեշտ է շրջանի ներսի նապաստակներին փոխել շրջան կազմողների հետ: Յերբ խաղացողները շատ են, շրջանները պետք է կազմել 7—8 հոգուց:

իրենց նապաստակը
գիտ

9. ԴՐՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄ

Խաղացողների քանակը՝ 20—50 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×50 մետր:

Խաղի բացատրությունը: Ուղիղ գծով հրապարակը բաժանում են յերկու մասի. խաղացողները բաժանվում են յերկու հավասար խմբի: Հրապարակի յուրաքանչյուր կիսում տնկում են հավասար քանակությամբ փայտ, ճյուղ և այլն, վորոնք ներկայացնում են դրոշակներ: Յուրաքանչյուր խաղացող աշխատում է առանց հարված ստանալու անցնել հակառակորդի հրապարակը և վերցնել դրոշակ. յերբ հաջողվում է վերցնել դրոշակը, նա առանց վախճանալու ազատ վերադառնում է իր խումբը, վորովհետև դրոշակ ունեցողներին հարվածել չի կարելի: Այն խաղացողները, վորոնք մինչև դրոշակ վերցնելը հարված են ստանում, գերի յեն ընկնում և մնում են հարված ստացած տեղում: Հաղթում է այն խումբը, վորը վորոշված ժամանակամիջոցում ավելի շատ դրոշակ կգրավի:

Խաղի կանոնները: Յուրաքանչյուր խումբ հակառակորդին հարվածելու իրավունք ունի միայն իր հրապարակի սահմաններում: Այն խաղացողները, վորոնք հարվածներից խուսափելու ժամանակ դուրս են գալիս հրապարակի սահման-


ներից, գերի ընկած են համարվում: Գերիներին կարող են ազատել իր խմբի խաղացողները՝ հարվածելով նրանց:

10. ԱՄՐՈՑԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Խաղացողների քանակը՝ 20 40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×40 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի կենտրոնում գծում են մեկ քառակուսի ամրոց, վորի շուրջը 2 մետր տարածությամբ ևս մեկ քառա-



կուսի աջակես, վոր պատերի հաստությունը լինի 2 մետր: Ամրոցի կենտրոնում և ամրոցից 10 քաչ հեռավորության վրա գծում են մեկական բանտ: Խաղացողները բաժանվում են յերկու խմբի, վորոնցից մեկը տեղավորվում է ամ-

րոցի ներսում և հանդիսանում է ամրոցի պաշտպանը, իսկ մյուսը խումբը տեղավորվում է ամրոցից դուրս և հանդիսանում է հարձակվող: Ղեկավարի սուլիչով սկսվում է խաղը, ամրոցի գրա-


վումը: Յուրաքանչյուր խումբ աշխատում է հակառակորդին քաշել իր կողմը:

Յերբ հակառակորդին հաջողվում է մեկնում մեկին քաշել իր կող-

մը, այդ խաղացողը գերի չե ընկնում: Հաղթում է այն խումբը, վորն ավելի շատ գերի կվերցնի:

Խաղի կանոնները: Կռվել կարելի չե միայն ամբողջ պատերի վրա. արգելվում է իրար բռնել, գլորել կամ գետնի վրայով սողալ. քա-

շել կարելի չե միայն ձեռքերից: Գերիներն անմիջապես պետք է տարվեն բանտ: Հարձակվող խումբը հաղթում է նաև այն ժամանակ, յերբ այս խմբի խաղացողներից վորևե մեկին կհաջողվի մտնել ամբողջ բանտը:




11. ԳԵՐԻ

Խաղացողների քանակը՝ 10—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×30 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բա-

ժանվում են յերկու հավասար խմբի. հրապարակի յերկու ծայրերում գծում են շրջաններ (քաղաքներ), իսկ շրջաններից 7—10 բալլ հեռավորության վրա՝ մեկական քառակուսիներ (բանտեր): Յուրաքանչյուր խումբ տեղավորվում է իր քաղաքի սահմաններում: Հեկավարի հրահանգով սկսվում է խաղը. վիճակով խմբերից մեկն իր



խաղացողներից մեկին ուղարկվում է դեպի հակառակորդի քաղաքը. հենց վոր սա մոտենում է քաղաքին, մյուս խմբից մեկը վազում է սրա յետևից և աշխատում է հասնել նրան ու հարվածել: Հենց վոր հակառակորդն ընկնում է սրա յետևից, առաջին խումբն ուղարկվում է հաջորդ խաղացողին, վորն իրավունք ունի հարվածել իրենից առաջ գուրս յեկող հակառակորդին. այս իրենից առաջ գուրս յեկող հակառակորդը թողնում է իր հետաժամանակ հակառակորդը թողնում է իր հետապնդումը և արագ յետ է վազում դեպի իր քաղաքը, վորտեղից նրան ոգնելու համար դուրս է վազում նոր խաղացող. սա իր հերթին իրա-

վունք ունի հարվածել առաջին խմբի իրենից առաջ դուրս չեկած խաղացողին: Այս խումբն իր հերթին ուղարկում ենուր խաղացողի, և այսպես խաղը շարունակվում է, մինչև վորևե մեկին հաջողվի հարվածել: Հարված ստացողը գերի յե ընկնում, վորին բանտ տանելուց հետո խաղն սկսում է գերի վերցնող խումբը: Գերիները համարվում են ազատված, յերբ նրանց կհարվածի իրենց խմբի խաղացողներից մեկը: Հաղթում է այն խումբը, վորն առանց հարված ստանալու գրավում է, այսինքն մտնում է հակառակորդի քաղաքի սահմանը, կամ վոր խումբն ավելի շատ գերի կվերցնի:

Խաղի կանոնները: Ձի կարելի յերկու հետապնդող միասին ուղարկել. գերիններն իրավունք չունեն բանտից փախչել, մինչև նրանց չազատեն: Ազատված գերիններին հարվածել չի կարելի, մինչև նրանք իրենց քաղաքը չհասնեն: Բոլոր խաղացողները պետք է կանգնած լինեն իրենց շրջանի ներսում, հակառակ դեպքում նրանց կարող է հարվածել հակառակորդ խմբի յուրաքանչյուր խաղացող:

12. ՅԵՐԿԱՐ ՁԻ

Խաղացողների քանակը՝ 10 — 15 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 10 × 15 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները

բաժանվում են յերկու խմբի. վիճակով խմբերից մեկը դառնում է «ձիեր», իսկ մյուսը՝ «նրստողներ»: Ձիերի խմբի առաջին խաղացողը կանգնում է պատի մոտ և բռնում է յերկրորդի գլուխը, վորը կռացած է. յերրորդը բռնում է յերկրորդի մեջքից, կռանում է և գլխով հենվում նրա աջ կողքին. նույնությամբ դասավորվում են մյուս ձիերը: Յերբ յերկար ձին պատրաստ է, սկսվում է խաղը. նստողները հերթով ցատկում են ձիերի վրա. վերջին նստողի ցատկելուց հետո համարում է մինչև յերեքը. յեթե վոչ մի սխալ տեղի չի ունեցել, նստողներն իջվում են և խաղը նույնությամբ վերսկսում: Հակառակ դեպքում, յերբ ցատկելու ժամանակ մինչև վերջինի յերեք համարելը նստողներից վորևե մեկը վայր է ընկնում կամ վոտքով կըպչում է գետնին, խաղացողները փոխում են դերերը, այսինքն նախկին ձիերը դառնում են նրստողներ և խաղը վերսկսում են:

Խաղի կանոնները: Ձի թուլատրվում նրստելուց հետո ուղղվել: Նստողներն այնպես պետք է նստեն, վորպեսզի հաջորդներին նստելու տեղ մնա: Ձիերը պետք է կանգնեն առանց շարժվելու և չաշխատեն նստողներին վայր գցել:

13. ԱՅՈՒՐՄԱ

Խաղացողների քանակը՝ 10—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×60 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են չերկու խմբի, շարք են կազմում և իրարից 10 քալ հեռավորության վրա կանգնում են մեկ գծի վրա: Յերկու շարքի առաջին



խաղացողները կռահում են, յերկուրդները ցատկում են սրանց վրայից և ութ քալ առաջ վա-

զիլով կռահում. յերրորդները ցատկում են այս չերկու կռացածների վրայից և նույնպես ութ քալ առաջ վազելով կռահում: Այսպես բոլորը ցատկում են իրենց առաջ կռացածների վրայից և իրենց հերթին կռահում:

Յերբ առաջին անգամ կռացողը ցատկում է բոլորի վրայից, խաղը վերջանում է. հաղթում է այն խումբը, վորի առաջին կռացողն ավելի շուտ կցատկի իր խմբի խաղացողների վրայից:



Խաղի կանոնները: Յերկու խմբի խաղացող-

ներն ել պետք է ցատկեն նույնանման պայմաններում: Կռացողների միջև յեղած տարածությունը կարելի է նախորդ չափել և նշանակել:

14. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՅՈՒՐՄԱ

Խաղացողների քանակը՝ 10—50 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 40×40 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացվում է ինչպես նախորդը, միայն այն տարբերությամբ, վոր այստեղ խմբերի չեն բաժանվում, այլ բոլորը մի շարք են կազմում և ցատկում շրջանաձև: Ստացվում է մի ամբողջ շղթա, և ցատկումը կրկնվում է մի քանի անգամ:

15. ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿ

Խաղացողների քանակը՝ 30—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 40×60 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են չերկու խմբի, վորոնցից մեկը կոչվում է «հեղափոխության մարտիկներ», իսկ կոչվում է «կապիտալիստներ»: Հրապարակի մի մյուսը՝ «կապիտալիստներ», չրապարակի վորի ծայրում տնկում են կարմիր դրոշակ, վորի շուրջը 3 մետր տրամագծով շրջան են գծում. շրջանից 20—25 քալ հեռավորության վրա դրոշակից մեկ մեծ շրջան, իսկ այդ շրջանի մեջ՝ մեկ ուրիշ ավելի փոքր շրջան: Հեղափոխության

մարտիկները տեղավորվում են ներսի փոքր շրջանում, իսկ կապիտալիստները գրավում են դրսի մեծ շրջանը և իրար ձեռքերից բռնելով ողակում են հեղափոխության մարտիկներին: Յուրաքանչյուր խումբ նախորոք ընտրում է իր առաջնորդը: Ղեկավարի ազդանշանով սկսվում է խաղը. հեղափոխության մարտիկներն աշխատում են ճեղքել թշնամու շարքը կամ նրանց ձեռքերի տակից անցնել ու վազել դեպի կարմիր դրոշակը: Կապիտալիստներն ընդդիմադրում են և ամեն կերպ աշխատում շղթայված պահել նրանց ու շրջանից դուրս չթողնել: Կապիտալիստների առաջնորդը գտնվում է շրջանից դուրս և աշխատում է հարվածել փախչող մարտիկներին: Հեղափոխության մարտիկների առաջնորդն էլ գտնվում է շրջանի դուրսը, վորը իր հերթին ոգնում է մարտիկների փախուստին. նա դեմքով դառնում է դեպի կապիտալիստների առաջնորդը և ձեռքերը կողմ տարածելով խանգարում է նրան: Յերբ հեղափոխության մարտիկների կեսից ավելին հավաքվում է կարմիր դրոշակի շուրջը, խաղը դադարեցնում են, խմբերը փոխում են իրենց դերերը և խաղը նույնությամբ շարունակում:

Խաղի կանոնները: Հարված ստացող մարտիկները կրկին մտնելու յեն շրջանը: Այն մար-

տիկները, վորոնք հասնում են դրոշակի շրջանը, ազատվում են հարվածներից, այսինքն նրանց հարվածել չի կարելի: Հեղափոխության մարտիկների առաջնորդը կարող է կապիտալիստների առաջնորդին խանգարել միան նրա առաջը կանգնելով:

16. ՈԳՆԻՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԶՈՂԵՐԻՆ

Խաղացողների քանակը՝ 20—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×50 մետր:

Խաղի ըացատրությունը: Հրապարակի կենտրոնում գծում են 3—5 մետր տրամագծով մեկ բանտ, իսկ յերկու հակառակ կողմերում՝ զուգահեռ գծեր, վորոնցից մեկը ներկայացնում է ընդհատակյա կոմմունիստական կազմակերպության կոմիտե, իսկ մյուսը՝ գործարանային շրջան: Ընտրում են 2 բանտի պահակ և 2 վոսջան: Ընտրում են 2 բանտի տեղավորվում են բանտի ներսը, իսկ վոստիկանները շրջում են բանտի շուրջ կողմը: Մյուս բոլոր խաղացողները (բանվորները) տեղավորվում են հրապարակի յերկու ծայրերում: Ղեկավարի ազդանշանով սկսվում է խաղը. բանվորներն ընդհատակյա կոմիտեից վազում են դեպի գործարանային շրջանը կամ գործարաններից վազում են դեպի կոմիտեն: Վոստիկաններն ընկնում են նրանց յետևից և աշ-

խառնում են բռնել, բռնված բանվորներին տանում են բանտը: Բանտի պահակները հսկում են ձերբակալվածներին, վորովհետև բանվորները կարող են ազատել իրենց ընկերներին, նրանց մոտից վազելով և ձեռքերին հարվածելով: Բանտի պահակներն իրավունք ունեն բռնել թե ազատող բանվորին և թե փախչող ձերբակալվածներին, այս դեպքում յերկուսն էլ մնում են բանտում: Բանվորներն աշխատում են ազատել բոլոր բանտարկվածներին, այնպես, վոր խողի վերջացնելու ժամանակ վոչ մի բանտարկված չմնա:

Խաղի կանոնները: Բոլոր բռնվածները պետք է գնան բանտ, բանտարկյալները փախչելու իրավունք չունեն, մինչև նրանց ձեռքերին չհարվածեն իրենց ընկերները: Բանտի պահակները բանտից դուրս գալու և բանվորներին հետապնդելու իրավունք չունեն: Յեթե ազատվող բանտարկյալին հաջողվում է առանց բռնվելու փախչել, իսկ ազատողը բռնվում է, այդ դեպքում բանտում մնում է վեջինը:

III. ԳՆԴԱԿՆԵՐՈՎ ԽԱՂԵՐ

Այս խաղերը կազմակերպելիս, վորպեսզի մասնակցողների ձեռքերը միակողմանի չզարգանան, ղեկավարը պետք է հետևի, վոր թե աջ և

թե ձախ ձեռքը միակերպ մասնակցեն խաղին: Այս խաղերը նետումների միջոցով զարգացնում են ձեռքերի ուժը, ճարպկությունը, շարժումների արագությունը և պատասխանատվությունը ընկերների առաջ: Այս խաղերում կանոնները բավականին բարդանում են և խաղացողներից պահանջում են վորոշ նախնական պատրաստականություն:

Այս բաժնի խաղերը տեխնիկական հարմարություն համար բաժանվում են մեծ և փոքր գնդակներով խաղերի:

Ա. ԽԱՂԵՐ ՓՈՔՐ ԳՆԴԱԿՈՎ

1. Հորանջող

Խաղացողների քանակը՝ 10—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 60×80 մետր:

Խաղի քաջատրությունը: Խաղացողներն իրարից 5—10 քալ հեռավորությամբ շրջան են կազմում: Հրահանգով սկսում են իրար նետել փոքրիկ գնդակը, անվանելով այն խաղացողի անունը, վորին նետում են գնդակը: Յեթե խաղացողը, վորի անունը կոչել են, չի կարողանում ոգում բռնել գնդակը, բոլոր խաղացողները փախչում են նրանից, իսկ նա աշխատում է վորքան կարելի յե շուտ վերցնել գնդակը: Հենց վոր վերցնում է գնդակը, գոռում է «կանգնիր», վոր վերցնում է գնդակը, գոռում է «կանգնիր»,

բոլոր խաղացողները կանգնում են իրենց տեղերում: Գնդակ վերցնողը հարվածում է վորևե մեկին գնդակով: Յեթե հաջողվում է, հարված ստացողը դուրս է գալիս խաղից և սպասում պատժի, իսկ հակառակ դեպքում, այսինքն վրիպելիս, խաղից դուրս ե գալիս վրիպողը և նույնպես սպասում պատժի: Յերբ խաղից դուրս չեկածները, հորանջողների թիվը հասնում է հնգի, խաղը դադարեցվում է, և սկսվում է պատիժը: Պատիժը կայանում է նրանում, վոր պատժվողը ձախ ձեռքով, ուսի վրայով, գնդակը նետում է դեպի յետ. խաղացողներից վորևե մեկը վերցնում է գնդակը և գետնին ընկած տեղից հարվածում հորանջողին: Յուրաքանչյուր հորանջող պատժվում է յերեք անգամ: Բոլորին պատժելուց հետո խաղը վերսկսվում է:

Խաղի կանոնները: Գնդակն իրար նետելիս անպայման պետք է տալ վորևե մեկի անունը. գնդակն ախպես պետք է նետել, վոր կարելի լինի աչք բռնել. շատ հեռու կամ շատ մոտիկ նետողն ինքն է պատժվում: Պատժի քանակը կարելի չէ փոփոխել ըստ համաձայնության:


2. Պատժված հորանջող

Խաղացողների քանակը՝ 15 — 30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30 × 40 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողներն ի-

րարից 4 քայլ հեռավորությամբ, դեմքերը դեպի կենտրոն դարձրած շրջան են կազմում: Այս շրջանից 15 քայլ հեռավորության վրա գծում են մի գիծ, վորը կոչվում է «քաղաք»: Այս գծից, քաղաքից, դեպի շրջան իրարից յերկու քայլ հեռավորությամբ կանգնում են նախորոք ընտրված չորս խաղացող, վորոնցից ամեն մեկն ունի ձեռքում բլունած ձաղք կամ գոմեկը



նշանակվում է առաջին, մյուսը՝ յերկրորդ, յերրորդը՝ յերրորդ, իսկ չորրորդը՝ չորրորդ: Խաղացողներից մեկը, վորը նույնպես ընտրվում է, կանգնում է շրջանի կենտրոնում:

Ղեկավարի ազդանշանով սկսվում է խաղը: Կենտրոնում կանգնած խաղացողը դեպի վեր ենետում գնդակը և կոչում է շրջան կազմողներից վորևե մեկի անունը. կանչվողը վազում է դեպի կենտրոն և աշխատում է գնդակն ոգում բռնել: Յեթե հաջողվում է գնդակը բռնել, ինքը կանգնում է կենտրոնում և գնդակը դեպի վեր նետելով կոչում է վորևե մեկի անունը. կենտրոնի նախկին խաղացողը մտնում է շրջանը: Այսպես խաղը շարունակվում է, մինչև կանչվողներից մեկն ու մեկը կհորանջի, և գնդակը

կընկնի գետին: Այս դեպքում հորանջողը (գնդակ չբռնողը) պետք է անցնի գոտիներով կանգնած խաղացողների միջից Գետի քաղաքը: Մինչև քաղաք (գիծը) հասնելը պահակները գոտիներով կամ ձաղքերով հարվածում են հորանջողին: Սրանից հետո պահակներից առաջինը գնում է շրջանի կենտրոնը, յերկրորդը կանգնում է սրատեղը, յերրորդը՝ յերկրորդի տեղը, չորրորդը՝ յերրորդի տեղը, իսկ հորանջողը՝ չորրորդի տեղը, և խաղը նույնությամբ շարունակվում է:

Խաղի կանոնները: Հորանջույն անպայման պետք է անցնի պահակների միջից: Պահակները հարվածում են առանց իրենց տեղերից շարժվելու: Դեմքին հարվածելն արգելվում է: Դեկավարը պետք է հետևի, վոր հարվածներն ուժեղ չլինեն և հորանջողին ցավ չպատճառեն:

3. Վորսորդն ու գազանները

Խաղացողների քանակը՝ 5—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 40×80 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողներից մեկը դառնում է «վորսորդ», իսկ մնացածները՝ «գազաններ»: Վորսորդը վերցնում է գնդակը, կանգնում հրապարակի կենտրոնում և սկսում է խաղը, գնդակը 3 անգամ գետի վեր նետելով: Այս ժամանակ բոլոր գազանները վազում են

հրապարակի գանազան կողմերը: Վորսորդը վերցնում է գնդակը և աշխատում հարվածել փախչող գազաններից մեկնում եկին: Վրիպելու դեպքում վերցնում է գնդակը և դարձյալ հարվածում: Հարված ստացող գազանները դառնում են «շներ», վորոնց պարտականոթյունն է ոգնել վորսորդին, այսինքն՝ վերցնել, բռնել զնդակը և տալ վորսորդին: Գնդակը գետնին չեղած ժամանակ գազանները վտարվում հրում են և աշխատում են թույլ չտալ վորսորդին կամ շներին տիրանալ գնդակին:

Խաղի կանոնները: Հարված ստացող գազանը շուն դառնալուց կարող է ազատվել, յեթե կարողանա իսկույն եթ գնդակով հարվածել վորսորդին: Խաղը շարունակվում է, մինչև վոր մնա մեկ գազան, վորը դառնում է վորսորդ, և խաղը նույնությամբ վերսկսվում է:

4. Հաւվից համված

Խաղացողների քանակը՝ 10—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 40×20 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողների թվի համեմատ հրապարակի մի ծայրում տնկում են փոքրիկ նշաններ: Նշանները համալրակվում են, և յուրաքանչյուր համար համապատասխանելու յե խաղացողների համարներին: Խաղացողները

բաժանվում են հավասար խմբերի և վիճակով խմբերից վորևե մեկը (նախորոք վորոշված տարածութունից) գնդակներով սկսում ե հարվածել նշանները: Յեթե գնդակը կպչում ե նշանին, այն դեպքում նշանի տերը, այսինքն հակառակորդ խմբի նույն համարով խաղացողը համարվում ե մեռած և խաղից դուրս ե գալիս: Յերբ տվյալ խմբի բոլոր խաղացողները մեկական անգամ հարվածում են, սկսում ե հարվածել մյուս խումբը, վորից հետո հաշվում են յուրաքանչյուր խմբի սպանվածների թիվը և վորոշում հաղթողը:

Խաղի կանոնները: Նախորոք վորոշվում ե տարածութունը և նշանակվում ե գծով: Կարելի չե համաձայնվել, վորպեսզի յուրաքանչյուր խումբ հարվածի վոչ թե մեկական անգամ, այլ միջանի անգամ: Թյուրիմացության տեղիք չտալու համար պետք ե անպայման համարակալել նշանները:

5. Յերկու քաղաք

Խաղացողների քանակը՝ 10—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 60×30 մետր:

Խաղի քացատրությունը: Գետնի վրա գծում են յերկու քաղաք, իրարից 15—25 քալ հեռավորության վրա. յուրաքանչյուր քաղաք իրենից ներկայացնում ե քառանկյունի 30 քալ

լայնությամբ և 40 քալ յերկարությամբ: Խաղացողները բաժանվում են յերկու խմբի և տեղավորվում քաղաքներում: Վիճակով խմբերից մեկն սկսում ե խաղը, զինված 10—15 գնդակներով: Յուրաքանչյուր խումբ աշխատում ե գնդակով հարվածել հակառակորդ խմբի խաղացողներից մեկնում կին, վորոնք կարող են ամեն կերպ խուսափել հարվածներից, բայց քաղաքի սահմաններից դուրս գալու իրավունք չունեն: Խմբի բոլոր խաղացողները հարվածում են հերթով: Յերբ առաջին խմբի բոլոր խաղացողները նետում են իրենց գնդակները, խաղը դադարեցվում ե, դուրս են գալիս բոլոր հարված ստացողները, և խաղը վերսկսում ե մյուս խումբը նույնությամբ: Հաղթում ե այն խումբը, վորը վորոշ ժամանակամիջոցում ավելի շատ մարդ կսպանի հակառակ քաղաքից:

Խաղի կանոնները: Հարվածներից խուսափելու ժամանակ քաղաքի սահմաններից դուրս չի կողը համարվում ե սպանված: Կարելի չե պայմանավորվել, վոր յուրաքանչյուր խաղացող հարվածի միջանի անգամ: Հաղթվող խմբի համար կարելի չե նշանակել վորոշ պատիժ:

6. Գնդակը բռնել

Խաղացողների քանակը՝ 15—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ մեծ դահլճ:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են մի քանի հավասար խմբի. յուրաքանչյուր խումբ կոչվում է համարով. որինակ, յեթե յերեք խումբ է՝ №1, №2 և №3 կամ վրեճ գույնով՝ կարմիր, սև, սպիտակ և այլն. Բոլոր խմբերի խաղացողները մի ընդհանուր շրջան են կազմում. Ղեկավարը կանգնում է շրջանի կենտրոնում և գնդակը վեր նետելով սկսում է խաղը. Յուրաքանչյուր խաղացող աշխատում է բռնել գնդակը: Գնդակ բռնողը բարձր կոչում է իր խմբի համարը կամ գույնը. Կանգնում է կենտրոնում և վեր է նետում գնդակը: Նոր գնդակ բռնողը կոչում է իր խմբի համարը կամ գույնը, կանգնում է կենտրոնում և նույնությամբ շարունակում: Գնդակ բռնող յուրաքանչյուր խաղացող ստանում է մեկ կամ յերեք թվանշան իր խմբի ոգտին: Խաղը շարունակվում է, մինչև խմբերից մեկը կստանա նախորդ փոքրված (50—70) թվանշանը:

Խաղի կանոնները: Ոգում գնդակ բռնողն ստանում է 3 թվանշան, իսկ գետնից վերցնողը՝ 1 թվանշան: Հրել և գնդակն իրարից խլելն ար-

գելվում է. կոպիտ խաղացողների խումբը տուգանվում է 2 թվանշանով:

7. Փոսիկներ

Խաղացողների քանակը՝ 5—15 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×10 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի մի ծայրում խաղացողների թվի համեմատ փոսիկներ են փորում. խաղացողներից մեկն սկսում է խաղը. վերցնում է ռետինե փոքրիկ գնդակը և սկսում գլորել դեպի փոսիկները, մինչև վոր գնդակն ընկնի վորեք փոսիկ: Հենց վոր գնդակն ընկնում է փոսիկը, բոլոր խաղացողները փախչում են, իսկ նա, ում փոսիկը վոր ընկել է գնդակն, արագ վերցնում է և աշխատում հարվածել վորեք մեկին: Հարված ստացողն սկսում է խաղը, իսկ վրիպելու դեպքում՝ նախկինը:

Խաղի կանոնները: Փոսիկներից հեռանալ և ախպես հարվածել չի թույլատրվում:


8. Ուղղագիծ փոսիկներ

Խաղացողների քանակը՝ 8—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×30 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի կենտրոնում գծում են ուղիղ գիծ, վորի վրա իրարից 20 սանտիմետր հեռավորությամբ փո-

րում են փոքրիկ փոսիկներ (10—15 սանտ. խորությամբ): Ընտրվում են յերկու առաջնորդ, իսկ մնացած բոլոր խաղացողների համար փորվում են փոսիկներ: Խաղացողներից յուրաքանչյուրը կանգնում է իր փոսիկից յերկու քաջ հեռավորության վրա: Առաջնորդները կանգնում



են իրար դիմաց գծի ծայրերում և փոսիկների ուղղությամբ իրար են գլորում գնդակը: Յերը գնդակն ընկնում է վորևե փոսիկ, բոլոր խաղացողները վազում են հրապարակի զանազան կողմերը, իսկ նա, ում փոսիկը վոր ընկել է գնդակը, վերցնում է գնդակը և գոռում է «կանգնիր». բոլորը կանգնում են, իսկ գնդակ վերցնողն առանց տեղից շարժվելու աշխատում է հարվածել վորևե մեկին: Վրիպելու դեպքում ստանում է մեկ թխանշան, իսկ յեթե հաջողվում է հարվածել, այդ դեպքում մեկ թխանշան ստանում է հարված ստացողը: Յուրաքանչյուր թխանշան ստացող իր փոսիկը գցում է վորևե նշան (քար, փայտ, թուղթ և այլն): Յերը խաղացողներից վորևե մեկն ստանում է յոթը թը-

վանշան, խաղը դադարեցնում են և սկսում են պատժել այդ խաղացողին: Պատժը կայանում է հետևյալում. պատժվողը կանգնում է մեկ վտաքի վրա, բարձրացնում մյուսը և աշխատում այդ վտաքի տակից նետել գնդակը վորքան կարելի չե հեռու: Մյուս խաղացողները կանգնում են՝ ով վորտեղ ցանկանում է և աշխատում են բռնել կամ գետնից վերցնել գնդակը: Նա, ով վոր բռնում է կամ վերցնում է գնդակը, նույն տեղից հարվածում է պատժվողին: Պատժից հետո խաղն սկսվում է նույնությամբ:



Խաղի կանոնները: Առաջնորդները գնդակը պետք է գլորեն և վաչ թե նետեն: Յուրաքանչյուր պատժվող պատժվում է յերեք անգամ:

9. Նապաստակը օրջանում

Խաղացողների քանակը՝ 15—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×30 մետր:

Խաղի քաղաքությունը: Հրապարակում գրծում են 7—8 մետր տրամագծով շրջագիծ. խաղացողները, բացի մեկից, շրջագծից միջանի քաջ հեռավորությամբ շրջան են կազմում: Ընտրվածը կանգնում է շրջանի կենտրոնում: Դեկավարի հրահանգով խաղն սկսվում է: Խաղա-

ցողները տարբեր ուղղությամբ իրար են նետում ռետինե փոքրիկ գնդակը: Այն խաղացողը, վորին տվյալ դեպքում ավելի մոտիկ է կանգնած կենտրոնի խաղացողը, հարվածում է նրան. յեթե այդ հաջողվում է, բոլոր խաղացողներն սկսում են փախչել, իսկ կենտրոնի խաղացողն արագ վերցնում է գնդակը և գոռում «կանգնիր»: Այս խոսքից հետո բոլորը կանգնում են, իսկ նա հարվածում է վորևե մեկին. յեթե հարվածը հաջողվում է, հարված ստացողը կանգնում է շրջանի կենտրոնում, և խաղը վերսկսվում է, հակառակ դեպքում խաղը վերսկսում է նախկին «նապաստակը»:

Խաղի կանոնները: Նապաստակը շրջանից դուրս գալու իրավունք չունի, բայց շրջանի սահմաններում կտրող է ցանկացած շարժումներ և ձևեր կատարել:

10. Կլոր ֆաղափ

Խաղացողների քանակը՝ 15—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×30 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի կենտրոնում գծում են մեկ շրջան. խաղացողները բաժանվում են յերկու հավասար խմբի. խմբերից մեկը մտնում է շրջանը և կոչվում է «քաղաքի» խաղացող, իսկ մյուս խումբը տեղավոր-

վում է շրջանի դուրսը և կոչվում է «դաշտի» խաղացող: Հրահանգով սկսվում է խաղը: Դաշտի խաղացողներն արագ իրար են տալիս փոքրիկ ռետինե գնդակը և աշխատում, վորպեսզի քաղաքի խաղացողները չիմանան, թե ում մոտ է գտնվում գնդակը: Հարմար առիթի դեպքում հարվածում են քաղաքի խաղացողներինց մեկին. Հարված ստացողը դուրս է գալիս քաղաքից և դառնում դաշտի խաղացող, հակառակ դեպքում վրիպողը դառնում է քաղաքի խաղացող: Այսպես խաղը շարունակվում է 10—15 րոպե, վորից հետո համբերը փոխում են իրենց դերերը և և խաղը նույնությամբ շարունակում: 10—15 րանցներուց հետո խաղը վերջացնում են: Հաղթում է այն խումբը, վորը խաղի սկզբից մինչև վերջը ավելի շատ խաղացող է վերցրել մյուս խմբից:

Խաղի կանոնները: Քաղաքի խաղացողներն իրավունք չունեն շրջանից դուրս գալու, իսկ դաշտի խաղացողները՝ շրջան մտնելու:


11. Գնդի պահակ

Խաղացողների քանակը՝ 5—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×20 մետր:

Խաղի բացատրությունը: Հարթ հրապարակում գծում են 50 սանտիմետր տրամագծով մի շրջան, վորի կենտրոնում դնում են փալտյա

գունդ (կրոկետի գնդի մեծությամբ): Շրջագծից 3-4 մետր տարածության վրա, բացի մեկից, բոլոր խաղացողները համարկիսաշրջանով փոսիկներ են փորում: Յուրաքանչյուր խաղացող պիտի ունենա 8 սանտիմետր յերկարության և 3 սանտիմետր հաստության



փայտ: Վիճակով ընտրվում է գնդի պահակ: Բոլոր խաղացողները կանգնում են իրենց փոսիկների մոտ և իրենց փայտերով հերթով աշխատում են շրջանից դուրս հանել գունդը: Վրիպողը մնում է իր տեղում, յերբ վորևե մեկին հաջողվում է դուրս նետել գունդը, բոլորը վազում են իրենց փայտերի յետևից, աշխատելով վորքան կարելի յե շուտ վերադառնալ, իսկ գնդի պահակը վերցնում է գունդը, վազում դեպի խաղացողների փոսիկները և աշխատում է մինչև նրանց վերադառնալը գունդը դնել վորևե մեկի փոսիկը: Այն խաղացողը, վորի փոսիկը գրավվում է, դառնում է պահակ:

Խաղի կանոնները: Յեթե խաղացողները կը վազեն փայտերի յետևից, վորևե մեկի վրիպե-

լուց հետո պահակն իրավունք ունի առանց գնդի գրավել ազատ փոսիկներից մեկը: Յեթե բոլոր խաղացողները վրիպում են, այդ դեպքում իրենց փայտերը դնում են փոսիկների վրա, իսկ պահակը գունդը գլորում է դեպի փայտերը: Նա, ում փայտին վոր կդիպչի գունդը, դառնում է պահակ, և խաղը վերսկսվում է:

12. Հեծելազոր

Խաղացողների քանակը՝ 10—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×30 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են յերկու հավասար խմբի, վիճակով խմբերից մեկը դառնում է «ձի», իսկ մյուսը՝ «ձիավոր»: Ձիերն իրարից 2—4 մետր տարածության վրա շրջան են կազմում, կռանում, մեկ վոտքը դնում են առաջ, ծունկը միքիչ ծալում և ձեռքերով հենվում ալդ վոտքի վրա: Հրահանգով սկսվում է խաղը, ձիավորները նստում են ձիերի մեջքերին և ձախից դեպի աջ իրար են նետում ռետինե փոքրիկ գնդակը: Յերբ գնդակն առանց վայր ընկնելու 3 լրիվ շրջան է անում, խաղը դադարեցվում է, ձիերը դառնում են դեպի աջ և ձիավորների առաջ-



նորդի «մարշ» հրահանգով քալում են շրջանով և լրիվ շրջան անելուց հետո կանգնում իրենց նախկին տեղերը և վերսկսում խաղը: Յեթե մինչև 3 լրիվ շրջան անելը գնդակը վայր ելնկնում, այն ժամանակ բոլոր ձիավորները ցատկում են իրենց ձիերից և փախչում, յետևից մեկնումեկը արագ վերցնում է գնդակը և գոռում «կանգնիր», բոլորը կանգնում են, գնդակ վերցնողն աշխատում է հարվածել ձիավորներից մեկնումեկին: Յեթե հաջողվում է հարվածել, այդ դեպքում ձիավորները դառնում են ձիեր, շալակում են նախկին ձիերին և խաղը շարունակում: Հակառակ դեպքում, յերբ վերիպում են և վոչ մի ձիավորի չեն կարողանում հարվածել, իրենք դարձյալ մնում են ձիեր և խաղը վերսկսում են:

Խաղի կանոնները: «Կանգնիր» խոսքերից հետո բոլորը պարտավոր են կանգնել: Հարվածողը պետք է հարվածի գնդակը վերցրած տեղից:

13. Սպիտակների զինաթափումը

Խաղացողների քանակը՝ 20 — 40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 40×40 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի յերկու հակառակ կողմում գծում են իրար դու-

գահեռ գծեր, վորոնց մի կողմը տեղավորվում է կարմիր բանակը, իսկ մյուս կողմում՝ սպիտակ բանակը: Սպիտակ բանակի սահմանից 15—20 մետր դեպի կենտրոն անց են կացնում մի գիծ ևս, վորի ուղղությամբ դասավորվում են սպիտակների գնդացիները (փայտեր, ճյուղեր, դրոշակներ և այլն): Խաղացողները բաժանվում են յերկու հավասար մասերի և տեղավորվում իրենց քաղաքներում: Հրահանգով սկսվում է խաղը, կարմիր բանակի խաղացողներից մեկը վերցնում է գնդակը և նետում է դեպի սպիտակ բանակը: Սրանից անմիջապես հետո կարմիր-բանակայինները վազում են դեպի հակառակորդը, վերցնում մեկական գնդացի և աշխատում արագ վերադառնալ իրենց բանակավայրը: Սպիտակներն արագ վերցնում են կարմիրների նետած գնդակը, վազում են մինչև գնդացիների գիծը և աշխատում այնտեղից գնդակով հարվածել վորևեկ կարմիր-բանակայինի: Յեթե այդ հաջողվում է, սպիտակ բանակը շահում է մեկ թվանշան, իսկ կարմիր բանակի ամբողջ խումբը յետ է դառնում և հանձնում է բոլոր գնդացիները, իսկ յերբ կարմիր բանակայիններին հաջողվում է առանց հարված ստանալու փախցնել գնդացիները, կարմիրներն են շահում մեկ թվանշան: Նախորոք սահմանվում

ե խաղի ժամանակը, վորից հետո խմբերը փոխում են դերերը և խաղը նույնությամբ շարունակում: Հաղթում ե աչն խումբը, վորն ավելի շատ թվանշան կստանա:

Խաղի կանոնները: Մինչև զնդակի նետելը կարմիրները վազելու իրավունք չունեն: Սպիտակները կարող են հարվածել կարմիրներին զնդացիների գծից մինչև կարմիրների սահմանը, կարմիրները զնդակը նետում են իրենց սահմանագծից:

Բ. ԽԱՂԵՐ ՄԵԾ ԳՆԴԱԿՈՎ

14. Գնդակը օրջանում

Խաղացողների քանակը՝ 15—25 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×20 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները ձեռքերից բռնած շրջան են կազմում, վորի կենտրոնում կանգնում ե վիճակով ընտրված խաղացողներից մեկը: Ղեկավարի ազդանշանով սկսվում ե խաղը, կենտրոնի կանգնողն աշխատում ե վտարով շրջան կազմողների ձեռքերի տակից դուրս հրել ֆուտբոլի գնդակը: Շրջանի խաղացողներն իրենց հերթին աջ կամ ձախ վտարով գնդամը դեպի կենտրոնն են հրում և ամեն կերպ աշխատում, վորպեսզի գնդակը շրջանից

դուրս չգա: Այսպես խաղը շարունակվում ե, մինչև կենտրոնի խաղացողին կհաջողվի գնդակը դուրս հրել: Այն խաղացողը, վորի աջ կողմից դուրս ե լեկել գնդակը, իր տեղը փոխում ե կենտրոնի խաղացողի հետ և սկսում ե խաղը:

Խաղի կանոնները: Ձեռքով բռնել կամ հրել չի թույլատրվում: Գնդակը շրջանից դուրս չեկած ե համարվում, յերբ անցնում ե շրջան կազմողների ձեռքերի տակից: Ֆուտբանչյուր անգամ խաղը վերսկսելիս պետք ե փոխել վտարը:

15. Գնդակի հրումը

Խաղացողների քանակը՝ 12—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 35×20 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակը չորս կողմից գծվում ե և բաժանվում յերկու հավասար մասի և վիճակով վորոշվում, թե վոր խումբն աշխատում ե խաղը: Այս բոլորից հետո յուրաքանչյուր խումբ տեղավորվում ե իր դաշտում: Ըսկըսող խմբի խաղացողներից մեկն աչնպես ե հարկադրված գնդակը, վորպեսզի նա հակառակորդի դաշտի միջով անցնի և դուրս գա յետևի գծից, հակառակորդ խումբն աշխատում ե թույլ չտալ անցնի հակառակորդի դաշտով և դուրս գա յետևի գծից: Յերբ վորևե խմբի հաջողվում ե աչգ,

հակառակ խումբն ստանում է մեկ տուգանային թվանշան: Այն խումբը, վորն ստանում է վորոշված (20-30) թվանշանը, համարվում է հաղթված:

Խաղի կանոնները: Անցնել հակառակորդի դաշտը կամ ձեռքով հրել գնդակը չի թույլատրվում:

16. ԲԵՐԴԻ ՌՍԲԱԿՈՍՈՒՄԸ

Խաղացողների քանակը՝ 10—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 25×25 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակի կենտրոնում գծում են 5—10 մետր տրամագծով մեկ շրջան. խաղացողների միջից վիճակով ընտրում են մեկ «բերդապետ», իսկ մյուսները դեմ-

քերը դեպի կենտրոն դարձրած տեղավորվում են շրջանից դուրս և կազմում մեկ շրջան: Շրջանի կենտրոնում, կառուցում են բերդը. վերջում են լեռեք փայտ, վերի մասերից կապում են և կանգնեցնում շրջանի կենտրոնում, փայտերի վրա դնում են մի



մեծ գնդակ: Բերդապետը կանգնում է կենտրոնում և պաշտպանում է բերդն արտաքին հարվածներից: Շրջանից դուրս կանգնած խաղացողներն իրար են նետում ֆուտբոլի գնդակը և

հարմար առիթի դեպքում հարվածում են բերդին՝ աշխատելով ավերել այն: Բերդն ավերված է համարվում այն ժամանակ, չեք փայտերը և գնդակը վայր է ընկնում: Նա, ում վոր կհաջողվի ավերել բերդը, փոխում է իր տեղը բերդապետի հետ, և խաղը վերսկսվում է:

Խաղի կանոնները: Բերդապետն իրավունք ունի գնդակը յետ հարվածել մարմնի բոլոր մասերով—ձեռքերով, վոտքերով, կրծքով, գլխով և այլն: Մյուս խաղացողները հարվածում են միայն ձեռքերով և իրավունք չունեն շրջանից ներս մտնելու:

17. ԳՆԴԱԿԸ ԲԵՐԴՈՒՄ

Խաղացողների քանակը՝ 10—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 60×40 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են չերկու հավասար խմբի և տեղավորվում են իրար դիմաց հրապարակի ծայրերում: Հրապարակի կենտրոնում դնում են մեկ նստարան, աթոռ, վորի վրա դնում են մի ֆուտբոլի գնդակ: Ղեկավարի սուլիչով խմբերից մեկին կապան խաղացող վազում են դեպի կենտրոն (բերդը), և ամեն մեկն աշխատում է ավելի շուտ (բերդը), և ամեն մեկն աշխատում է ավելի նստարանից վայր գցել գնդակը: Գնդակն ավելի շուտ վայր գցողը հանդիսանում է հաղթող և հա-

կառակորդին գերի չե վերցնում: Սրանից հետո
գնդակը կրկին դնում են աթոռի վրա: Ղեկա-
վարի հետևյալ սուրիչով վազում են հաջորդ խա-
ղացողները: Հաղթում է այն խումբը, վորն ա-
վելի շատ գերի կվերցնի:


Խաղի կանոնները: Մինչև ղեկավարի սու-
րիչը վազել չի կարելի: Գնդակն աթոռից վազը
դրել թույլատրվում է միայն ձեռքերով:

18. ԳՆԴԱԿԸ ԽԼԵԼ

Խաղացողների քանակը՝ 12—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 50×15 մետր:

Խաղի բացատրությունը: Ուղիղ գծով հրապա-
րակն ըստ չերկարության բաժանում են յերկու
հավասար մասի: Յուրաքանչյուր մասում գծից
5 քաջ հեռավորությամբ գծում են շրջաններ,



վորոնք գտնվելու յեն իրարից 3-ական քաջ հե-
ռավորության վրա: Խաղացողները բաժանվում
են չերկու հավասար խմբերի, և յուրաքանչյուր

խումբ տեղավորվում է հրապարակի մի մասի
շրջանակներում: Ամեն մի խումբ ընտրում է իր
առաջնորդը, վորը կանգնում է հակառակորդ
խմբի առաջ: Ղեկավարի հրահանգով, վորը կանգ-
նած է հրապարակի ծայրում, սկսվում է խաղը:
Վիճակով խմբերից մեկը գնդակն աջ կողմից
դեպի ձախ է տալիս: Հակառակորդ խմբի ա-
ռաջնորդը, վորը կանգնած է այդ շարքի առաջ,
աշխատում է բռնել գնդակը և տալ իր խմբի աջ
ծայրի խաղացողին: Հակառակ խումբը գնդակն
ստանալուն պես նույն կերպ գնդակն իրար է
տալիս աջից դեպի ձախ: Մյուս խմբի առաջ-
նորդը նույնպես աշխատում է խլել գնդակը և
տալ իր խմբի խաղացողներին: Այն խումբը, վո-
րը կկարողանա գնդակն աջ ծայրից հանձնել
մինչև ձախ ծայրի խաղացողին, ստանում է մեկ
թվանշան: Վորոշ ժամանակից հետո շատ թվա-
նշան ստացող խումբը հաղթում է:

Խաղի կանոնները: Գնդակն իրար տալու
ժամանակ շրջանակներից դուրս գալ չի կարելի:
Իրար վրայով նետել նույնպես չի կարելի: Ա-
ռաջնորդները կարող են վազել ամեն ուղղու-
թյամբ, բայց գնդակն անպայման պետք է աջ
ծայրի խաղացողին տալ:

19. ԳՆԴԱԿԸ ՇԱՐՔԵՐՈՎ

Խաղացողների քանակը՝ 20—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 60×20 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են չերկու հավասար խմբի և կանգնում են իրար դիմաց: Յուրաքանչյուր խմբի խաղացողների միջև պետք է լինի 4—6 քաջ տարածություն: Ղեկավարի հրահանգով շարքերի առաջին համարները փոխարինվում են հանձնում են չերկրորդ համարներին, չերկրորդները՝ չերրորդներին և այլն: Վերջին խաղացողները գնդակն ստանալուն պես վազում են դեպի կենտրոն և գնդակը հանձնում ղեկավարին: Այն խումբը, վորը գնդակն ավելի շուտ կհանձնի, համարվում է հաղթող:

Խաղի կանոնները: Գնդակն իրար պետք է տալ աջ կողմից:

20. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՂ ԳՆԴԱԿ

Խաղացողների քանակը՝ 10—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×20 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողներն իրարից միջանի քաջ հեռավորության վրա շրջան են կազմում: Վիճակով ընտրվում է մեկը, վորը նշանակվում է գնդակի «ուղեկից» և կանգ-

նում է շրջանի կենտրոնում: Ղեկավարի ազդանշանով խաղացողներն իրար են տալիս զանազան ուղղությամբ փոխարկի գնդակը: Գնդակը ձեռքից ձեռք անցնելով սկսում է ճանապարհորդել, ուղեկիցը վազում է գնդակի յետևից և աշխատում է հարվածել գնդակը: Նա, ում ձեռքում վոր հարվածում է գնդակը, իր տեղը փոխում է ուղեկիցի հետ և շարունակում խաղը: Խաղը վերջացնում են, յերբ խաղացողների մեծ մասն ուղեկից է դառնում:

Խաղի կանոնները: Խաղացողներն իրավունք չունեն տեղներից շարժվել, յերբ գնդակն իրենց մոտ է գտնվում: Կարելի չէ պայմանավորվել գնդակն աջից դեպի ձախ տալ կամ հակառակը:

21. ԳՆԴԱԿԸ ՊԱՐԱՆԻ ՎՐԱՅԻՑ

Խաղացողների քանակը՝ 20—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×15 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակը ձգած պարանով ըստ չերկարության բաժանում են յերկու մասի: պարանն ամրացնում են մեկուկես մետր բարձրություն ունեցող փայտերի վրա: Խաղացողները բաժանվում են չերկու խմբի և տեղավորվում հրապարակում պարանի աջ և ձախ կողմերը: Ղեկավարի հրահանգով խմբերից մեկն սկսում է խաղը. գնդակը պարանի վրայով նե-

տում են հրապարակի մյուս կողմը: Այս խումբն իր հերթին գնդակը նետում է հակառակ կողմը: Այսպես շուրջանշուրջ խումբ գնդակն իր հրապարակից հակառակորդ հրապարակն է նետում և ամեն կերպ աշխատում, վորպեսզի գնդակն իր մասում գետին չընկնի: Գնդակը գետին ընկնելիս հակառակ խումբն ստանում է մեկ գուլ, Հաղթում է ալն խումբը, վորն ավելի շուտ կշահի 15 գուլ:

Խաղի կանոնները: Զի թույլատրվում գրնդակը յետ հարվածել բռունցքով կամ բռնել պարանից: Պարանի տակից անցած գնդակը չի հաշվում և վերադարձվում է նետող խմբին: Յուրաքանչյուր հաղթութունից հետո խաղը վերսկսվում է, վորի ժամանակ խմբերը փոխում են իրենց հրապարակները:

22. ԳՆԴԱԿՈՎ ՍՊԱՆԵԼ

Խաղացողների քանակը՝ 20 — 40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×20 մետր:

Խաղի բացատրությունը: Հրապարակում գրծում են մեկ շրջան 7—10 մետր տրամագծով: Խաղացողները բաժանվում են յերկու խմբի: մի խումբը տեղավորվում է շրջանի ներսը, իսկ մյուսը՝ շրջանի դուրսը: Դեկավարի հրահանգով շրջանից դուրս կանգնած խումբն աշխատում է

Ֆուտբոլի գնդակով հարվածել ներսի խմբի խաղացողներին, վորոնք վազվզում են և ամեն կերպ աշխատում խուսափել հարվածներից: Այն խաղացողը, վորին գիպչում է գնդակը, համարվում է «սպանված» և դուրս է գալիս խաղից: Յերբ շրջանի բոլոր խաղացողները «կսպանվեն», խմբերը փոխում են տեղերը և խաղը վերսկսում: Այն խումբը, վորն ավելի կարճ ժամանակամիջոցում «կսպանի» հակառակորդին, հանդիսանում է հաղթող:

Խաղի կանոնները: Ներսի խաղացողները շրջանից դուրս գալու, իսկ դրսի խաղացողները շրջան մտնելու իրավունք չունեն:


23. ԴԵՊԻ ԳՆԴԱԿ

Խաղացողների քանակը՝ 10—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×30 մետր:

Խաղի բացատրու-

թյունը: Խաղացողները բաժանվում են յերկու հավասար խմբի և շարքեր կազմելով տեղավորվում են իրար դիմաց 30—40 քայլ տարածության վերա: Հրապարակի կենտրոնում գծում են 50 սանտիմետր տրամագծով շր-




ջան, ուր դնում են ֆուտբոլի գնդակ, Հրահանգով խմբերի աշակերտյան առաջին խաղացողները վազում են դեպի առաջ, հասնում հակառակորդ խմբի գծին, այնտեղից վազում են դեպի կենտրոն և աշխատում են շուտ վերցնել գնդակը: Այն խաղացողը, վորին հաջողվում է այդ, իր խմբի ոգտին շահում է մեկ թվանշան: Յուրաքանչյուր խաղացող, վորին հաջողվում է ավելի շուտ վերցնել գնդակը, իրավունք ունի գնդակը նետել դեպի հակառակորդ խմբի շարքը, և յեթե գնդակն անցնում է շարքի միջից, շահում է մեկ թվանշան ևս. այսպիսով ընդամենը շահում է յերկու թվանշան: Եթե գնդակը շարքի միջից չի անցնում, այն դեպքում շահում է միայն մեկ թվանշան: Նույնությամբ վազում են հաջորդ խաղացողները և խաղը վերջանում է, յերբ բոլոր խաղացողները, վազում են: Հաղթում է այն խումբը, վորն ավելի շատ թվանշան կշահի:

Խաղի կանոնները: Գնդակը շարքի միջով նետելիս խաղացողներն իրավունք ունեն գնդակը յետ հարվածել ձեռքերով և վոտքերով:

24. ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆ

Խաղացողների քանակը՝ 10—50 հոգի:
Խաղի տեղը՝ հրապարակ 60×30 մետր:
Խաղի բացատրությունը: Հրապարակի հա-

կառակ ծայրերում իրար գուգահեռ անց են կացնում յերկու գիծ, վորոնցից մեկը ներկայացնում է սպիտակների, իսկ մյուսը՝ խժժ-ի սահմանը: Ընտրում են յերկու հոգի, մեկը խժժ-ի, իսկ մյուսը սպիտակների սահմանա-



պահ: Խժժ-ի սահմանապահը գտնվում է իր սահմանում և ունի ֆուտբոլի գնդակ. սպիտակների սահմանապահը տեղավորվում է հրապարակի կենտրոնում, իսկ մնացած բոլոր խաղացողները, վորոնք հանդիսանում են բանվորներ և ցանկանում են անցնել խժժ, տեղավորվում են սպիտակների սահմանում: Ղեկավարի հրահանգով խժժ-ի սահմանապահը նետում է իր մոտ գտնված գնդակը դեպի բանվորները, ից հետո բանվորներից մեկը կամ մի քանիսը, նայած պայմաններին, սկսում են վազել դեպի խժժ: Սպիտակ սահմանապահը վերցնում է նետած գնդակը և աշխատում է հարվածել փախչող բանվորներին. յեթե այդ հաջողվում է, թե հարված ստացողը և թե մյուս փախչողները վերադառնում են իրենց նախկին տեղը: Կարմիր սահմանապահը կրկին է նետում գնդակը, և այս-

պես խաղը շարունակվում է, մինչև բոլոր բան-
վորները կանցնեն իՍՆՄ:

Խաղի կանոնները: Սահմանապահից հար-
ված ստացողը և բոլոր փախտակաձևները պետք
է վերադառնան իրենց նախկին տեղը. սահմա-
նապահն իրավունք ունի մոտենալ փախչողնե-
րին և աջակցել հարվածել: Այն խաղացողը, վո-
րը հարվածից խուսափելով դուրս է գալիս հը-
րապարակի սահմաններից, համարվում է հար-
ված ստացող: Այն բանվորներին, վորոնք ան-
ցել են արդեն իՍՆՄ սահմանը, հարվածել չի
կարելի:

IV. ԸՆԴԴԻՍԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐ

Այս խաղերում մասնակցողները բավակա-
նին ուժ են գործ դնում. այդ իսկ պատճառով
խմբերը պետք է աջակցել կազմել, վորպեսզի
ուժերը մոտավորապես հավասար լինեն: Այս
խաղերն ավելի դժվար են և շուտ հոգնեցնող,
այդ իսկ պատճառով պետք է ավելի կարճ ժա-
մանակ սահմանել, քան նախորդ բաժնի խաղերի
համար:

1. ՈՎ ՈՒՄ

Խաղացողների բանակը՝ 20—40 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ, վորի

կենտրոնում իրարից մեկ քայլ հեռավորության
վրա գծում են յերկու զուգահեռ գծեր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բա-
ժանվում են յերկու հավասար խմբի և դասա-
վորվում են իրար դիմաց զուգահեռ գծերի վրա:
Ազդանշանով սկսում են խաղը. յուրաքանչյուր
խմբի խաղացողներից մեկը կամ միևնույն ժա-
մանակ միջանիսը բռնում են հակառակորդ
խմբի խաղացողների ձեռքերից և աշխատում են
բաշել դեպի իրենց սահմանը: Հաղթում է այն
խումբը, վորն ավելի շուտ գերի կվերցնի վո-
րոշված ժամանակամիջոցում:

Խաղի կանոնները: Արգելվում է իրար շո-
րերից քաշել: Իրար ոգնել թույլատրվում է:
Հակառակորդը հաշվում է գերի ընկած, յերբ
նրան սահմանի գծի մյուս կողմն են քաշել:

2. ՊԱՏԸ ՊԱՏԻ ԴԵՄ

Խաղացողների բանակը՝ 20—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ, վորի
կենտրոնում իրարից չորս քայլ հեռավորությամբ
գծում են յերկու զուգահեռ գծեր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները,
ինչպես նախորդ խաղում, բաժանվում են յեր-
կու հավասար խմբի, թևանցուկ շղթա չեն կազ-
մում և դասավորվում են զուգահեռ գծերի մի-

ջև: Ղեկավարի հրահանգով սկսում են խաղը: յուրաքանչյուր խումբ առանց շղթան ձեղքելու աշխատում են հակառակորդին յետ բռնել և գծից դուրս հանել: Այն խումբը, վորի շղթան կբացվի կամ գծից դուրս կհրվի, համարվում է հաղթված:

Խաղի կանոնները: Բոթել կամ հրել թուլլատրվում է միայն կրծքով: Վտաքով հրողները պետք է հեռացվեն խաղից: Շղթան դուրս հըրված է համարվում, յերբ բոլոր խաղացողները գտնվում են գծի մյուս կողմը: Կարելի չէ խաղալ նաև մեջքերն իրար դարձրած:

3. ԽՈՒՄԲ ԽՄԲԻ ԴԵՍ

Խաղացողների քանակը՝ 16—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ, վորի կենտրոնում մի գիծ են քաշում:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են յերկու հավասար խմբի: Յուրաքանչյուր խմբի խաղացողները բռնում են իրար մեջքերից և շղթա կազմում: Ամեն խումբ կանգնում է գծի մի կողմը: հակառակորդ խմբերի առաջին խաղացողներն ամուր բռնում են իրար ձեռքերից և ազդանշանով սկսում են խաղը: յուրաքանչյուր խումբ ուզում է հակառակորդին իր կողմը քաշել: Այն խումբը, վորին կհաջողվի

հակառակորդին իր կողմը (գծի հակառակ կողմը) քաշել, հաղթող է հանդիսանում:

Խաղի կանոնները: Արգելվում է իրար քաշել շորերից: Այն խումբը, վորի շղթան կբացվի, նույնպես հաղթված է համարվում:

4. ԱՆՁԵՌՔ ՀԱՂԹՈՂԸ

Խաղացողների քանակը՝ 15—25 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ, վորի կենտրոնում գծվում է հնգից վեց քալ տրամագծով շրջան:

Խաղի բացատրությունը: Խաղացողները տեղավորվում են շրջանի մեջ: Ղեկավարի հրահանգով սկսվում է խաղը: Բոլորը ձեռքերը դնում են կոնքերին և աշխատում մեջքերով իրար շրջանից դուրս հրել: Նա, ով վոր կմնա բոլորին դուրս հրելուց հետո, համարվում է հաղթող:

Խաղի կանոնները: Արգելվում է իրար հարվածել, հրել վտաքով կամ քաշքշել: Շրջանից դուրս հրված խաղացողները կրկին ներս մտնելու իրավունք չունեն:

5. ՊԱՐԿԱԿՈՒՎ

Խաղացողների քանակը՝ 10—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ կամ դահլիճ, վորի կենտրոնում պետք է դրված լինի հաստ ձող (կարելի չէ և նստարան):

Խաղի բացատրությունը: Խաղացողներն ըստ կարգի զույգ-զույգ սկսում են խաղը: Կանգնում են ձողի վրա, վերցնում խոտով լցված պարկեր և սկսում են իրար հարվածել: Յուրաքանչյուրն աշխատում է ստիպել հակառակորդին ձողից իջնել: Կարելի չէ խաղալ նաև կապած աչքերով: Խաղի կանոնները: Դեմքին հարվածելն արգելվում է:

6. ՄԵՂԱՎՈՐԸ ԳԵՐԻ

Խաղացողների քանակը՝ 15—30 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 15×30 մետր:

Խաղի բացատրությունը: Ընտրվում են յեռու «գերի», մյուս խաղացողներն իրար ձեռքից բռնած շրջան են կազմում. գերինները տեղավորվում են շրջանի ներսը: Սուլիչով սկսվում է խաղը: Գերիններն ամեն կերպ աշխատում են շրջանից փախչել, ձեռքերի տակից անցնել, շրջաթան ձեղքել կամ ձեռքերի վրայից ցատկել: Յերբ նրանց հաջողվում է փախչել, փախուստի մեղավորները դառնում են գերի, և խաղը վերսկսվում է:


Խաղի կանոնները: Չի կարելի ծնկով շրջաթան ձեղքել, հարվածել, իրար հետ կոպիտ վարվել և շորերից բաշքշել:

7. ՔԱՌԱՆԿՅՈՒՆԻ ՊԱՐԱՆ ՁԳԷԼ

Խաղացողների քանակը՝ 4—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×20 մետր:

Խաղի բացատրությունը: Յերկար և հաստ պարանի ծայրերը պինդ կապում են և այնպես դնում գետնին, վորպեսզի քառակուսի կազմվի: Քառանկյունի պարանի յուրաքանչյուր անկյունից 3 քայլ տարածության վրա տնկում են մեկական փայտ. խաղացողներից չորսը վերցնում



են պարանի անկյուններից և սուլիչից հետո սկսում են ձգել պարանը: Յուրաքանչյուրն աշխատում է այնքան ձգել, վորպեսզի ազատ ձեռքով կարողանա դիպչել տրնկված փայտին: Նա, վորը կռակչի փայտին առանց պարանը բաց թողնելու, հաշվվում է հաղթող:



Խաղի կանոնները: Պարանը պետք է ձգել մեկ ձեռքով: Հենց վոր քառյակից մեկն ու մե-

կը դիպչի փայտին, սուլիչով պետք ե դադարեցնել խաղը: Պառկած կամ նստած ձգել չի թույլատրվում: Յեթե խաղացողները շատ են, յուրաքանչյուր անկյունից կարող են ձգել 2, 3 և ավելի խաղացող:

V. ԵՍՏԱՓԵՏԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Եստաֆետային են կոչվում այն խաղերը, չերբ խաղացող խմբերից մեկին աշխատում ե վորքան կարելի չե շուտ հանձնել վորևե իր: Եստաֆետային խաղերը շատ հետաքրքիր են և գրավիչ ինչպես խաղացողների, այնպես ել դիտողների համար: Տոներին, մրցումներին և յեւրոթիներին կազմակերպված եստաֆետները միշտ մեծ հաջողություն են ունեցել: Այս բաժնում զետեղված եստաֆետների մեծ մասը հատուկ այդ նպատակի համար են նախատեսված:


1. ՀԱՍԱՐԱԿ ԵՍՏԱՖԵՏ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 5—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×30 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են յերկու կամ մի քանի հավասար խմբի: Հրապարակի մի ծայրում յուրաքանչյուր խումբ կանգնում ե իրար յետևից գծի վրա և շարք

կազմում: Հրապարակի հակառակ ծայրում այս գծից 20—40 մետր տարածության վրա գծում են մի ուրիշ գիծ: Խմբերի առաջին խաղացողներն ստանում են վորքելի դրոշակ, փայտ, վղկապ կամ մի այլ իր, վոր կոչում ենք «եստաֆետ»: Յերբ բոլորը պատրաստ են, դեկավարի ազդանշանով սկսվում ե խաղը: Առաջին համարներն եստաֆետը ձեռքերին վազում են առաջ, հասնում մինչև յերկրորդ գիծը և յետ վազելով իրենց նախկին տեղը, եստաֆետը հանձնում են հետևյալ խաղացողին, իսկ իրանք կանգնում են շարքի վերջը: Հետևյալ համարներն եստաֆետն



ստանալուն պես վազում են դեպի գիծը, հասնում և կրկին վերադառնալով իրենց տեղը՝ եստաֆետը հանձնում հաջորդներին. այսպես շարունակվում ե մինչև վերջին խաղացողը, վորը եստաֆետն ստանալուն պես վազում ե դեպի յերկրորդ գիծը և եստաֆետը հանձնում ե այն-

տեղ կանգնած դատավորին: Հաղթում է այն խումբը, վորն ավելի շուտ կհանձնի եստաֆետը:

Խաղի կանոնները: Մինչև եստաֆետն ստանալը գիծն անցնել չի կարելի: Յեթե ճանապարհին եստաֆետը վայր է ընկնում, պետք է այն բարձրացնել և ապա շարունակել վազքը: Խաղի ընթացքում խմբերը կամաց առաջ են գալիս այնպես, վոր հաջորդ վազողները կանգնած լինեն գծի վրա:

2. ՀԱՆԴԻՊՈՂ ԵՍՏԱՖԵՏ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 10 — 20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ նախորդի մեծությամբ:

Խաղի բացատրությունը: Բոլոր խաղացողները բաժանվում են միջանի խմբի. յուրաքանչյուր խումբ մեկից մինչև վերջ թիվ է տալիս. կենտ համարներն իրար յետից (ծոժրակում) կանգնում են մի գծի վրա, իսկ զույգ համարները՝ հակառակ կողմի գծի վրա: Գծերի միջի տարածությունը պետք է լինի 25—50 մետր: Հրահանգով յուրաքանչյուր խմբի առաջին համարներն եստաֆետները ձեռքերին վազում են դեպի իրենց յերկրորդ համարները. յերկրորդ համարներն ընդունում են եստաֆետները, վազում

են դեպի յերրորդ համարները և հանձնում եստաֆետը, այսպես մինչև վերջին խաղացողը, վորն եստաֆետը հանձնում է հրապարակի կենտրոնում կանգնած դեկավարին: Շուտ հանձնողը հաղթում է:

Խաղի կանոնները նույնն են, ինչ վոր նախորդ խաղում:

3. ԿԱՐՏՈՖԻԼ ՏՆԿԵԼ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×40 մետր:

Խաղի բացատրությունը: Խմբերը տեղավորվում են հրապարակի մի ծայրում ուղիղ գծի վրա. գծից 7—30 մետր տարածության վրա յուրաքանչյուր խմբի համար գծում են 20—50 սանտիմետր տրամագծով յերեքական շրջան: Ամեն մի խումբ ունի իր պարկը, վորի մեջ գտնվում է 3 կարտոֆիլ: Դեկավարի ազդանշանով սկսվում է խաղը: Խմբերի առաջին համարները վազում են դեպի իրենց շրջանները և յուրաքանչյուր շրջանում մեկ կարտոֆիլ դնում ու արագ յետ վազելով իրենց տեղը, դառարկ պարկը հանձնում են յերկրորդ համարներին: Յերկրորդ համարները վազում են դաշտը, կարտոֆիլները հավաքում պարկի մեջ և յետ վազելով պարկերը հանձնում

հետևյալ խաղացողներին. սրանք նորից սնկում են կարտոֆիլը, չորրորդները հավաքում են և այլն: Այն խումբը, վերն ափերի շուտ կվերջացնի իր աշխատանքը, հաղթում է:

Խաղի կանոնները: Կարտոֆիլներն անպատճառ պետք է շրջանների մեջը դնել. կարտոֆիլ կորցնող խումբը համարվում է հաղթված:

4. ԵՍՏԱՖԵՏ ՓԱՅՏԵՐՈՎ ՅԵՎ ՑԱՏԿՈՒՄՆԵՐՈՎ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 10—15 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×40 մետր:

Խաղի բացատրությունը: Խմբերի առաջին համարներն ունեն մեկ մետր յերկարություն ունեցող փայտեր: Անկավարի ազդանշանով առաջին համարները վազում են մինչև վերջաված տեղը, վերադառնում իրենց տեղը և փայտի մյուս ծայրը տալիս յերկրորդ համարներին: Հետո յերկուսն էլ փայտը բռնած անց են կացնում շարքում կանգնածների վտաքների տակից, մեկը խմբի աջ կողմից, մյուսը ձախ կողմից վազելով: Խմբի բոլոր խաղացողներն արագ ցատկում են փայտի վրայից: Շարքի վերջը հասնելուց հետո առաջին համարը կանգնում է շարքի վերջում, իսկ յերկրորդ համարը վերցնում է փայտը և վազում դեպի վերջաված գիծը, հասնում, յետ և դառ-

նում և փայտի ծայրը տալով յերրորդ համարին՝ կատարում նույնը, ինչ վոր առաջինը: Խաղը վերջանում է, յերբ խմբերի վերջին համարներն ըստանալով փայտը՝ վազում են դեպի գիծը և հանձնում դեկավարին: Շուտ հանձնող խումբը հաղթում է:

Խաղի կանոնները: Փայտը գետնին չպետք է քսվի: Փայտի վրայից պետք է ցատկել յերկու վտաքով:

5. ԵՍՏԱՖԵՏ ՈՒՂՂԱԳԻԾ ՑԱՏԿՈՒՄՆԵՐՈՎ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×50 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են խմբերի: Բոլոր խմբերը կանգնում են ուղիղ գծի վրա: Հրահանգից հետո առաջին համարները տեղից առանց ուժ առնելու ցատկում են դեպի առաջ: Ցատկած տեղը նշանակվում է. հետևյալը ցատկում է այս նշանակված տեղից. սրա ցատկած տեղն էլ է նշանակվում, յորտեղից ցատկում է հետևյալը և այլն: Բոլորի ցատկելուց հետո չափվում է տարածությունը: Հաղթում և այն խումբը, վորը կոլեկտիվ է: Կարելի չէ կազմակերպել նաև յետ կամ ուժ առած ցատկումներով:

Խաղի կանոնները: Ցատկումները պետք է կատարել տեղից առանց ուժ առնելու, հակառակ դեպքում ցատկումը չի հաշվում: Յերեք անգամ սխալ ցատկողի տարածությունը հաշվի չի առնվում:

6. ԳՈՒՆԴ ՇՐՈՂՆԵՐ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 3—5 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×50 մետր:

Խաղի ըացատրությունը: Խմբի առաջին մասնակցողը կանգնում է գծի վրա, վերջում թեթևացրած գունդը կամ կլոր քարը, մոտեցնում է ուսին և ամբողջ ուժով հրում է (նետում է) դեպի առաջ: Վայր ընկած տեղը նշանակվում է, վորտեղից նույնությամբ հրում է յերկրորդը: Քարի վայր ընկած տեղը նշանակվում է, վորտեղից հրում է յերրորդը և այլն: Թելով չափում են ամբողջ տարածությունը, վորը հանդիսանում է տվյալ խմբի արդյունքը: Նույն ձևով հրում են մյուս խմբերը: Հաղթում է այն խումբը, վորն ավելի հեռու յե հրել գունդը:

Խաղի կանոնները: Գունդը կամ քարը ծանր չպետք է լինի: Հրողները կարող են հրել թե աջ և թե ձախ ձեռքով: Կարելի յե պայմանավորվել, վորպեսզի յերկու ձեռքով ել հրեն:

7. ԵՍՏԱՅԵՏ ԱՐԳԵԼՔՆԵՐՈՎ

Խաղացողներին քանակը՝ յուրաքանչյուր խմբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ՝ արգելքներով ապահոված:

Խաղի ըացատրությունը: Բաժանվում են հավասար խմբերի: Յուրաքանչյուր խաղացող անցնելով արգելքները՝ պետք է հասնի նշանակված տեղը և նույն կերպ վերադառնա: Որինակ՝ ցատկել մարդու, աթոռի, պարանի վրայից, անցնել նրստարանի տակից, պտավել ծառի շուրջը և այլն: Հաղթում է այն խումբը, վորը շուտ կվերջացնի:

Խաղի կանոնները: Արգելքները և վազքի պայմանները բոլոր խմբերի համար միատեսակ պետք է լինեն:

8. ԵՍՏԱՅԵՏ ԽՄԲԵՐՈՎ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 3—5 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×40 մետր:

Խաղի ըացատրությունը: Խաղացվում է ինչպես հասարակ հստեֆետ, միայն այն տարբերությամբ, վոր այստեղ վազում են վոչ թե մեկ մեկ հոգի, այլ ամբողջ խմբով իրար ձեռքից բռնած:

Խաղի կանոնները: Սկզբից մինչև խաղի վերջը ձեռքերը չպետք ե բաց թողնեն:

9. ԳՆԴԱԿԸ ՎՈՏՔԵՐԻ ՄԻՋՈՎ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խումբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×30 մետր:

Խաղի բացատրությունը: Խմբերի խաղացողները վոտքերը լախ բացած կանգնում են իրար յետևից և շարք կազմում: Յուրաքանչյուր խմբի գծի մոտ կանգնած խաղացողն ունի մեկ գնդակ: Ազդանշանով սկսվում ե խաղը. առաջին համարները կռահում են և վոտքերի միջով գնդակը դեպի յետ են



տալիս: Շարքի վերջին խաղացողը գնդակին ըստանալուն պես վազում ե մինչև յերկրորդ գիծը և յետ դառնալով կանգնում ե շարքի առաջը և նույնությամբ գնդակը դեպի յետ ե տալիս: ախպես շարունակվում ե, մինչև վոր բոլորը կվազեն: Գնդակը դեկավարին շուտ հանձնող խումբը հաղթում ե:

Խաղի կանոնները: Վազելու ժամանակ ամբողջ խումբը կամաց-կամաց պետք ե յետ գնա վազողներին գծի մոտ տեղ տալու համար:

10. ԳՆԴԱԿԸ ԳԼԽԻ ՎՐԱՅԻՑ

Խաղացվում ե ինչպես նախորդը, բաց ախտեղ գնդակը յետ ե տրվում գլուխների վրայով:




11. ԵՍՏԱՖԵՏ ՇՐՋԱՆՈՎ

Խաղացողների քանակը՝ 20—60 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 30×30 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները բաժանվում են չորս հավասար խմբի և անդավորվում են շրջանում շառավիղաձև: Յուրաքանչյուր



խմբի առաջին խաղացող վերցնում ե ետափետը և դեկավարի սուլիչից հետո սկսում ե վազել շրջանի չորս բոլորը: Իր տեղը հասնելուց հետո ետափետը հանձնում ե հետևյալ խաղացողին:

Սա յեւ իր հերթին կատարում ե նույնը, մինչև բոլորը կվազեն: Վերջինը շրջան կատարելուց հետո ետափետը հանձնում ե կենտրոնում կանգնած դեկավարին:

Խաղի կանոնները: Շրջանի յետևով վազել չի կարելի: Յուրաքանչյուր հետևյալ խաղացող հստաֆետը պետք է վերցնի շրջանի արտաքին կողմից:

12. ԵՍՏԱՖԵՏ ՄԵԿ ՎՈՏՔԻ ՎՐԱ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×15 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացվում է ինչպես հասարակ հստաֆետը, միայն այն տարբերությամբ, վոր այստեղ վոչ թե վազում են, այլ ցատկում են մեկ վոտքի վրա:



Խաղի կանոնները: Ցատկելու ժամանակ վոտքը փոխել չի կարելի. փոխելու դեպքում մեղավորը նորից է սկսում: Յերկու գծերի միջին տալաժուկները պետք է կարճ լինի:

13. ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐԻ ԵՍՏԱՖԵՏ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 10—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×15 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացվում է ինչպես նախորդը, միայն այն տարբերությամբ, վոր

այստեղ վազողներն իրենց մեջքի վրա վորոշ բեռ են տանում, այսինքն շալակում են խաղացողներից մեկին:

Խաղի կանոնները: Յեռ դառնալիս խաղացողները փոխում են իրենց դիրքերը, այսինքն նախկին շալակողը նստում է ընկերոջ մեջքին:

14. ԳՈՐՏԵՐԻ ԵՍՏԱՖԵՏ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×15 մետր:



Խաղի բացատրությունը: Այս հստաֆետի ժամանակ վազելու փոխարեն խաղացողները ցատկոտում են գորտերի նման: Ձեռքերը դնում են կոնքերին և միջին պագում: Մյուս մասերում նման է նախորդ հստաֆետներին:

Խաղի կանոնները: Քայլել կամ վազել չի կարելի: Պետք է ցատկոտել լերկու վոտքով:

15. ՉՈՐՔՈՏԱՆԻ ԵՍՏԱՖԵՏ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×15 մետր:

Խաղի բացատրությունը: Այս խաղը խաղացվում է ինչպես հասարակ հստաֆետը, բայց

այստեղ վազելու. փոխարեն առաջ են շարժվում չորքոտանու նման սկզբից մինչև վերջ:

Խաղի կանոնները: Կանգնել և վազել չի կարելի:

16. ՔԱՐՍ ԵՍՏԱՖԵՏ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 3—5 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ
20×15 մետր:



Խաղի բացատրությունը: Այս եստաֆետի ժամանակ առաջ են շարժվում չորքոտանու նման, միայն մեջքը դեպի գետին առած. Այս ձևով հասնում են մինչև յերկրորդ զիծը, իսկ այնտեղից յետ են դառնում սովորական վազքով:

Խաղի կանոնները նույնն են, ինչ վոր նախորդում:



17. ԵՍՏԱՖԵՏ ՅԵՐԵՔ ՎՈՏԲՈՎ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 10—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ
20×20 մետր:

Խաղի բացատրությունը: Խաղացողները կազմում են զույգեր, վորոնց ներսի

վորտքերը կապում են, այսինքն մեկի աջ վորտքը կապում են մյուսի ձախ վորտքի հետ: Կապում են յերկու տեղից՝ ծնկի վերևից և ներքևից:

Խաղի կանոնները: Հեշտ վազելու համար պետք է բռնել իրար ուսերից:

18. ԵՍՏԱՖԵՏ ՍԱՅԼԵՐՈՎ

Խաղացողների քանակը՝ յուրաքանչյուր խմբում 10—20 հոգի:

Խաղի տեղը՝ հրապարակ 20×10 մետր:

Խաղի բացատրությունը: Այս եստաֆետում խմբի խաղացողներից մեկը

ձեռքերը դնում է գետնին՝ իսկ մյուսը վերցնում է սրա վորտքերը և դնում է իր կոն, բերին: Ազդանշանով այս զույգերը շարժվում են դեպի յերկրորդ զիծը: Հասնելուն պես փոխում են դիրքերը (սալը դառնում է հրող, իսկ նախկին հրողը՝ սալը) և այդպես վերադառնում իրենց տեղը: Այս եստաֆետում յերկու զծերի տարածությունը 10 մետրից ավել չպետք է լինի:



Խաղի կանոնները: Յուրաքանչյուր խաղացող պետք է ունենա իրեն համար առանձին եստաֆետ: Եստաֆետը տանում են սալերը բերաններում բռնած:

19. ԵՍՏԱՖԵՏ ՊԱՐԿԵՐՈՒՄ



Խաղացողների բանակը՝ յուրաքանչյուր

խմբում 5—10 հոգի:

Խաղի տեղը՝ հրա-

պարակ 20×20 մ.:

Խաղի քաղաքապետը-

թյունը: Այս եստա-

ֆետում բոլոր խմ-

բերն ունենալու լին մեկական պարկ: Առաջին համարները մտնում են պարկերի մեջ, կապում գոտկատեղը և այդպես վազում: Յետ դառնալիս դուրս են գալիս պարկերից և պարկերը հանձնում հետևյալներին. այսպես մինչև վերջին խաղացողը: Շուտ վերջացնող խումբը հաղթում է:

Խաղի կանոնները: Մինչև իր տեղ չհասնելը պարկից դուրս գալ չի կարելի:

ՈՒՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ


1. Մարց.— Զրույցներ խաղի մեթոդիկայի և թեորիայի մասին
2. Գորինելսկի, Մարց յեվ Ռադին.— Խաղեր և զվարճություններ
3. Սկոսակ.— Մարմնամարզական խաղեր
4. Ֆիլիսիս.— Շարժական խաղեր
5. Գոլորոռոկո.— Շարժական խաղեր
6. Բարխաե յեվ Վիենյովսկի.— Խաղեր և զվարճություններ ամառը
7. Զեռնյակ.— Խաղեր գյուղում
8. Զեռն յեվ Սերեյի.— Շարժական խաղեր և ֆիզիկական վարժություններ
9. Պերգովա.— Դպրոցական խաղեր
10. Բեսսակ.— Խաղեր ֆիզդաստիարակության դասերի համար
11. Կարնիլովա.— Ռադինա յեվ Ռադին.— Շարժական խաղեր
12. Մորոզով յեվ Բոգդանով.— Խաղից դեպի կյանք
13. Սմոլյարով.— 100 խաղ պատանի պիոներների
14. Վիենյովսկի.— Մասսայական խաղեր
15. Վալին.— Պատանի պիոներների խաղեր և խերտեր
16. Պլաս.— Ամառային շարժական խաղեր
17. Պանով.— Շարժական խաղեր

Նկարները վերցված են Զեռնյակի, Գոլորոռոկոյի և Վալինի ձեռնարկներից:



8118

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻ



ՄԱՐԿԱԿԱՆ ՆՈՒՆԱԿԱՆ

Երևան, 1923
Լուսավորչական կենտրոն

<< Ազգային գրադարան >>



NL0235136

99. 670

ԳԻՆԸ 30 ԿՈՊ. Ման. (3¹/₄ մ.)



Пионерские подвижные игры

Госиздат СССР Армении
Эривань—1929